և դուք լերուք՝ սուրբ ըստ կարի։

Հրեշտակ։

Տէր բաղմացաւ՝ Թիւ համարոյ,
արատաւոր՝ այս արդարոյ.
կարծեմ, հանուր՝ առաքինուոյ,
ոչ պակասի՝ բիծ արատոյ։

Դպրաւոր։

Գիտեմ գիտեմ, այո՛ այո՛,
ես արուագէտ՝ միոյ միոյ.
այլ զի ցուցից՝ և 'ի փորձոյ,
առէք Կըշիռ ինձ ըստ գործոյ։

Հրեշտակ պահապան։

Տէր աղաչեմ՝ առ քո սիրոյ,
ներօղ ակամբ՝ հայեաց կշռոյ.
թէ ոչ, ո՞ւր է՝ և արդարոյ,
արդարանալ՝ առաջի քոյ։

Դպրաւորն։

Ներողութե՛ն՝ անց ժամանակ,
արդարութիւն է աստ յստակ.
միայն արդար՝ քո աղաչանք,
թէ արժանի՛ դառան քեզ սանք։

Սատանայ։

Ո՞ւր արժանի՝ Պարասկևի,
ծրդեալն 'ի մեղս՝ աննեռելի.
ահա և թաթ՝ կշռոցս է լի,
իւրովք չարեօք՝ անկշռելի։

Հրեշտակ։

Սասա՛ք քեզ տէր, ո՛վ չար սատան,
զի ո՛չ խորհիս, յո՞ր կաս ատեան.
տե՛ս, արտասուքս այս ընդ արեան՝
պարասկևեայ, ծանրեալ դառան։

Դպրաւորն։

Ես դատաւոր՝ արդարութեան,
տամ իրաւունս՝ ճշմարտութեան.
որ զղջացաւ՝ և՛ 'ի վայրկեան,
բայց ճշմարիտ, կեայ յաւիտեան։

Հրեշտակ։

Ահա ածաւ՝ և այլ հոգի,
արատանիշ, բայց ներելի։

Դեռ։

Եթէ այդպէս՝ ներել լինի,
արդարութի՝ ուր տեսանի։

Դատաւորն։

Ի՛մ անվրէպ՝ Կրշիռ յայտնի,
յայտնի առնէ՝ զոր արժանի.
արդ կշռեսցի՛ ըստ իմում բանի,
բան և խորհուրդ՝ դոցծ յատենի։

Հոգին պատասխանէ։

Ո՛վ անաչառ տէր, և արդար,
գիտեմ, ինձ՝ եմ անարդար.
այլ մի միայն՝ իմ մեղթար,
է սուրբ արիւնդ՝ հոգւոյս սատար։

Արդ կողկողեմ՝ ես անվճար,
շնորհ մի յիս պատ դիցի նըժար։

Դատաւորն։

Լուա՛յ բանիդ, զի յիս անկար,
զի և 'ի կեանս՝ յիս յուսացար.
արդ ներեցի՝ զոր ինչ յանցեար,
տկարութիւն, ոչ չարաչար։

Հրեշտակ՝ վասն այլոց։

Իսկ զի՞նչ դոգցուք՝ վասն եղկելոյս,
որ ծանր են իրք՝ ըստ չափ կշռոյս։

Դեռ։

Մի՛թէ ունի՞ք՝ և ասա՛ ինչ յոյս,
զի և ըզմութն՝ ածէք 'ի լոյս։

Հրեշտակ։

Այո՛, ահա դայ Մայր և Կոյս,
'ի ցրեալ ըզձեր՝ խաւարս յանդոյս.
պաշտպան կալով՝ այժմու հիդոյս,
որ միշտ կուսին՝ պատիւ մատոյց։

Դեռ։

Խաւարասոյզ լեցուք յանձին,
զի մայր լուսոյ՝ է դիմաձին.
մի՛ այլ թողցուք՝ մարդկան ազին,
գիտել ըզյարդ՝ այդր կուսին։

Տէրամայր առ Տէրն։

Ի՛մ միածին՝ սուրբ դատաւոր,
արդա՛ր 'ի բանս՝ Բանդ ահաւոր.
խնդիր ունիմ՝ առ քեզ այսօր,
որ ինձ շնորհես՝ զայս պարտաւոր։
Թէև բազմօք՝ էր ապաշնորհ,
այլ պաշտօնեայ՝ ջերմ քոյին մօր.
որով և քոյդ՝ արժանաւոր,
պաշտօն չեղծաւ՝ խսպառապուռ։

Դատաւորն։

Գիտես Մա՛յր իմ, լսօղ եմ քեզ,
այլ 'ի դատելս՝ ո՛չ լինիմ հեզ.
արդ առ խնդիրդ՝ արդեալ կայ մեծ,
զի չափ մեղաց դորա է դէզ։

Տէրամայրն։

Արա՛ ըստ քում՝ խմաստութեան,
միայն փրկեա՛ զայս պարտական։

Դատաւորն։

Կալթիլ կալթին՝ քում կուսութեան,
զոր ինձ եառուր՝ 'ի մանկութեան,

մեղաւորիդ՝ դեղ փրկութեան՝
լեցի • Լեցի ծընողիս բան։
Այլ զի լեցի՝ և դատ արդար,
թող դա երթայ 'ի պատժավայր •
մինչև մաքրիլ՝ հալոցաբար,
զի փրկեացի՝ և արբաբար։

Հրեշտակք՝ վասն այլոց։

Տէր, և սոքա՝ դասք բազմութեան,
են 'ի կշիռս՝ քո քննութեան,
պակասաւորք՝ ըստ թերութեան,
բայց սուրբ անօթք՝ ըստ ընտրութեան։

Դատաւոր։

Ամենայն ինչ՝ յիմ ընտրութեան,
չափով, թոռ՝ով, կշռով եղան •
արդ ոյք իւ՝իք՝ պակասեցան,
լցցին 'ի բով անդ մաքրութեան։
Ո՞չ ասացի՝ յաւետարան,
թէ դան ըմպէ՝ թերի ծառայն •
է՛ որ բազում, է՛ որ սակաւ,
ըստ իւր գործոց՝ ըն կշռութեան։
Եւ թէ 'ի բանտ՝ գայ պարտապան,
անդ տուժեսցի՝ ըզչափ լրման •՝
զի ո՛չ ելցէ, թէ ոչ տացէ,
և ըզյետին՝ ընիւն անդամ։
Հապա ըստ թիւ՝ ողորմութեան,
արբցէ դա դան՝ ըզգօնութեան։
Այլ խստագոյն՝ սմա՛ արժան,
արժանանալ՝ ներողութեան։
Զայն ոք արկէք՝ 'ի ջերմ քուրայն,
զի զըտեսցի՝ յիմ մաքրարան։

Զայս

Զայս ոք 'ի ցուրտ՝ իմ սառնարան,
առ գաղջութիւն՝ իւր քաւարան։
Այլոց նոյնպէս՝ որ այսպէս դան,
կայ յիմ պայման՝ այլևայլ դան։

Հոգիք ննջեցելոց։

Տէր արժանի՛ եմք յիրաւի,
մեք հարուածոյս՝ սաստիկ դանի•
այլ ողորմած՝ սիրտ քո բարի,
քո խնայեսցէ՝ բարեկամի։
Թէև տանջանքս՝ մեծ ղղալի,
վրոքը, առ յանցանս՝ մեր գրելի•
այլ բոց սրտի՝ անբերելի,
զի քոյդ յամէ՝ տես տենչալի։

Ոգի։

Անդիտացայ՝ ես յաշխարհի,
թէ ասա պայման՝ այսդոյն պարհի•
որով կենաց՝ ճանապարհի,
սակաւաձեռն՝ թաշակ առի։

Այլ ոգ։

Եւ ես դիւրին՝ համարէի,
ասա վճարել՝ պարտ անթերի•
որով՝ սիրով ոչ համբերի,
իմռում խաչի՝ անդէն յերկրի։

Այլ։

Ես ո՛վ եղբարք՝ առ առաւել,
ասա կարծէի՝ օր մի հանել•
ամք ինն անցին՝ ոչոք յայց ել,
ասել առ իս, թէ զերծար, ել։

Այլ։

Իսկ ինձ արդեօք՝ զի՞նչ ակն ունել,

որ տանամեայ՝ կարծեմ կրել.
Հարիւրաւոր՝ ամօք յամել,
ինձ խիթալի, թէ չէ անել:

Այլ:

Իմ յանձնեալ էր՝ վասն հոգւոյս,
պատարագիս՝ շատ, ըստ հոգոյս.
զի՞նչ գործեցին՝ ժառանգք մարմնոյս,
որ ոչ օգտիմ՝ յեկեղեցւոյս:

Այլ:

Ես անտէրունչ՝ ցելքս շնչոյս,
ինչ չունէի՝ թողուլ այլոց.
միթէ սովին՝ եղէց անյոյս,
տէր է իմ յոյս՝ անսիրելւոյս:

Հրեշտակ՝ առ ոգի:

Ուրախ լեցի՝ սիրտ քո այսօր,
զի քեզ նպաստ՝ կայ մատնաւոր.
այլ առաւել՝ նպաստաւոր,
քո 'ի քո կեանս՝ գործք կամաւոր:

Առ այլ:

Մ'խիթարեաց՝ և դու յիմ լուր,
զի առ վաղիմ՝ շինցի քո հուր.
քանզի զեղաւ՝ զովարար ջուր,
ողորմութիւն, աղօթք մաքուր:

Առ այլ:

Լուսաւորեաց՝ լուսաւորեաց,
'ի վայր նստեալդ՝ 'ի ստուերամած.
զի լոյսն անեղ՝ 'ի քեզ ծագեաց,
ըղձո խաւարն՝ մերժեաց 'ի բաց:

Հոգին:

Տեսից արդեօք՝ այսօր յանկարծ,

զերեսս լուսոյ՝ լոյս երեսաց։
եթէ՞ միայն՝ լոկ փարատեաց,
քո աւետիս՝ զիմ սիրտ տրտմած։

Հրեշտակ։

Արի՛ արի՛, ընդէ՞ր ննջես,
այսուհետև՝ կենդանի ես։
ահա քո՝ լուսատու մեղ,
նա հրաւիրեաց՝ 'ի լոյս ըզքեզ։

Այլ։

Կարծեմ մերձեալ՝ զօր յարութեան,
և ես դեռ կամ՝ արդեալական։
ո՜հ, ա՛ւր ինձ օր՝ այցելութեան,
ողորմեսջի՛ք՝ որդի՛ք մարդկան։

Այլ։

Ա՛յն ինչ եկիր՝ դու յայս զընդան,
ուր այլք դար մի՝ սպասեալ կան։
դուցէ եկեալ՝ դու անսադան,
ընդ փոյթ ելցես՝ ընդ մեզ յատեան։

Հրեշտակ։

Արի՛ք ելէ՛ք՝ ամենեքեան,
զի հասեալ կայ՝ մեծ դատաստան։
ընդ ելանել՝ ձեր ըստ դրան,
հնչէ և փող՝ դաբրիէլեան։

ՀԱՆԴԷՍ Գ:

Տեսիլ յարութեան մարմնոց:

Քն Խաչաւոր:

Հասեալ է ժամ՝ կատարածի,
զոր յսկզբանց՝ 'ի միտ ածի.
տիեզերաց՝ ազգ եղեցի,
ուժգին փողով՝ որ լուիցի:
Թող յարիցեն՝ գունտ աշխարհի,
'ի դատաստան՝ իւրոյ հասաչի.
զի իրաւունք՝ յայտնի՛ լիցի,
յաշխարհամար՝ 'ի հանդիսի:

Գաբրիէլ:

Փող հարկանեմ՝ աւագատիպ,
յայտնաքարող՝ քաջահնչող.
Արի՛ք ննջեալք՝ 'ի մահու հող,
եկայք 'ի դատ, դոչէ՝ կոչող:

Հրեշտակք:

Բա՛ռէ ահեղ՝ տեսարանիս,
'ի կոչ երկնից՝ թագաւորիս.
ի՞նչ 'ի քթթել՝ ական թարթիս,
ժողով եղև՝ երկնի հերկրիս:
Կէսք 'ի հողոյ՝ ելին 'ի վեր,
այլք 'ի ծովէ՝ ձկանց հին կեր.
հողիք մարմին՝ դտին ընկեր,
զիւր սեպհականն՝ էառ իւր տէր:
Նոյնպէս այսօր՝ թագաւոր մեր,

հան-

Հանդիսանայ՝ ամենատէր.
աշխարհ լինի՝ արդեօք աւեր,
այլ մեծ աշխարհ՝ շինի 'ի վեր ։

Մահ ։

Ո՞ւր ես եղբայր՝ իմ, քո՛ւն թմրեալ,
լո՛ւռի, տեսէր, զեղեւն՝ եղեալ.
զեռ՞ի զարթոյց՝ անակնկալ,
փողն ընդհանուր՝ զիմ ննջեցեալ ։

Քուն ։

Ո՞ւր ինձ մնաց՝ արդ թմբրութիւն,
յաշխարհալուր՝ յայս դղրդիւն.
և ո՞չ կորեաւ՝ արդեօք համբուն,
և քուն մահուդ՝ հին այլաբուն ։

Մահ ։

Այո՛ այո՛, յայս և 'ի սոյն՝
վայրկեան, է կէտ՝ իմ, քո վերջնոյն.
այլ յելքս անդ՝ յետին շնչոյն,
դէ՛տակն կա՛լ՝ անկարծելւոյն ։
Զիս արդ խնդրեն՝ յիմարք ողջոյն,
պաղատելով՝ գալ յիւրեանց տուն.
զի առ ահի՝ վերջին վճռոյն,
ընտրեն ըզմահ՝ թաքչիլ ուրոյն ։
Բայց ես փախչիմ՝ յոյժ հեռագոյն,
յիմ ատելեացս՝ յառաջագոյն.
ոյց պատուհաս՝ ըստ արժանւոյն,
է յաւիտեան՝ կեալ յետ մահուն ։

Քուն ։

Լսեմ, զոչեն՝ բլրոց, լերանց,
ծածկոյթ լերուք՝ մերոց անձանց ։
Երինք զոչեն՝ աւերակաց,

դուք ծածկեցէք՝ ըզկոյտ չարաց։
Զի յահաւոր՝ տեառն երեսաց,
մեք հալեցաք՝ ըստ հալոցաց։
Գան և հնչիցուք՝ արձագանգաց,
թէ մեք քանդեմք՝ ըզմնացուածս։

Մահ։

Ո՞չ տեսանես՝ ըզգետ հրոյ,
յորդեալ ուղխիւ՝ առ 'ի վերոյ.
որ զամենայն՝ աղտ, դիրտ՝ մարմնոյ,
'ի ծով ամայ՝ խորս ծծմբոյ։
Եւ ոչ մնայ՝ հետք շինուածոյ,
կամ հաստահիմն՝ գոյք հաստուածոյ.
հարթածաւալ՝ երեսք դետնոյ,
մնայ անշուք՝ ըստ առաջնոյ։

Քառն։

Զի՞նչ բարբառիս, ես չիմանամ,
'ի դղորդմանց՝ խուժաներամ.
երկինք երկիր՝ դամ քան զդամ,
այլափոխին, ես ապշեալ կամ։
Շէնք վիմարդեայք՝ խորտակեցան,
շիրիմք, բրգունք՝ ինքնին բացան։
ձայնք 'ի խորոց, ձայնք 'ի բարձանց,
գոռմամբ գոչմամբ՝ աշխարհք լցան։

Մահ։

Տե՛ս և զանդունդ՝ բացեալ հողոյ,
վիհք դժոխոց՝ ժանտ ժայթքելոյ.
Ճիւաղք այսոց՝ մարախք հոգւոյ,
յերկիր զեղան՝ հանդոյն զեռնոյ։
Թանձրամարմին՝ տգեղ ելոյ,
մեղաստիրաց՝ գարշ մսեղւոյ,

ողեղապոյն՝ տեսիլ հոգւոյ,
երևեսցի՝ յայսմ պահու։

Քոռն։

Ես ոչ ժուժեմ՝ հայել քնաւ,
'ի չարաշուք՝ փաղանգ զերկրաւ.
ուր տենչալի՝ տես կայ զերկնաւ,
դասուց սրբոց՝ հոյլք ընտրանաւ։
Որոց թռիչք՝ սքանչելեաւ,
նորափեառուր՝ հանդերձանաւ,
զարծու

՝ էանց՝ և զաղաւնեաւ.
հրեշտակացան՝ ասել, իրաւ։

Մահ։

Արդ հարկ է ինձ՝ թողուլ զաշխարհ,
ոչ այլ տեսից՝ զողորմ աշխար.
ես մեռանիմ, կեցցէ՛ կեանք յար,
բարին բարի, չար մնայ չար։

Քոռն։

Եւ իմ հատցի՝ ընդ մէջ հին լար,
զի քընաբերս՝ բեկաւ քնար.
խորտակեցայ՝ սատփորս իսպառ,
անիւն 'ի գուբ՝ անկայ խոնարհ։

Կոյին։

Ո՞ւր իցէ մահ, և ո՞ւր չար քուն,
ուր խաճանէ՝ զիս որդն անքուն.
դատապարտեալս՝ յայնչափ տարւոյն,
զիաղդ յերեսս՝ ելից սրբոյն։
Ինձ այս առեան՝ է չարագոյն,
քան զամ՝ տանջանս հոգւոյն.
զի երևիլ՝ դիմաց վերնոյն,
անբերելի է չար մարդոյն։

Յուդայ:

Ես առաւել՝ ամօթալից,
որպէս 'ի դէմս՝ փրկչին ելից.
զի չեմ 'ի չար՝ լոկ ծառայից,
այլ դող մատնիչ՝ ընդ ընտանեաց:
Զիարդ զերեսս՝ եղբարցս տեսից,
որք արքայիս՝ են դահակից.
և զոր ամօթ՝ մեծ կրեցից,
դէմ յանդիման՝ երկրի հերկնից:

Ներոն. Դիէոս. Դիոնդիպիանոս.
Մատաթիանոս. Խ այլն:

Ի՛մ երեսաց՝ ամօթ է մեծ,
ըստ յանցանացս՝ իմ մեծամեծ.
զայնչափ նշանս՝ ակն իմ եռեալ,
չամոքեցայ՝ երօք պէսպէս:
Առիւծ էի՝ առ դառինս հեզ,
գիշատէի՝ գազանապէս.
արդ ոչ նայիմ՝ ես սևերես,
'ի լուսափայլ՝ նոցա երեսս:

Յուլիանոս:

Որոյ չարութիւն՝ արդարանայ,
առ ուխտազանց՝ չարեօքս, իմա՛.
զի սարկաւագ՝ սուրբ պաշտօնեայ,
ելով, եղէ՝ չար սատանայ:
Զիմ կամակար՝ տէրն ուրացայ,
հալածեցի յիւրոյն անխնայ.
այսքան եղեալ՝ առ նա դժնեայ,
օրպէս ելից՝ յատեան նորա:

Սիմոն մոգ:

Ընօթ չարեաց՝ կախարդասարք,

ամօթապարտ՝ եմ չարաչար.
յետ գիտելոյ՝ զի՞նչ բարի, չար,
մեղմեխ մտօք՝ խիստ գտայ քար։
Արմատ եղէ՝ սկզբնաչար,
չար աղանդոց՝ այլայլափառ.
հերետիկոսք՝ մոլար յամառ,
և կորստեան՝ յոքունց պատճառ։

Դեռ։

Կարկեցարո՛ւք՝ ո՛վ խելագարք,
զի քան զձեզ՝ կան և՛ս չարք.
յատեա՛ն ելէք, թէ լցէք արք,
տեսցո՛ւք, չարեօք՝ ո՞ր յաղթեն պարք։
Դուք էք բնութիւն՝ մարդիկ տկարք,
որ մեօք անկայք, ուր եդան լարք.
մեք հոգեղէն՝ ջահք լուսավառք,
առ չարութիւն՝ եղեաք խաւարք։

Սատոյէլ։

Պապանձեցէ՛ք՝ ո՛վ լեզո՛ւագարք,
դեւք և մարդիկ՝ չարք անհամարք.
զի բոլորիցդ՝ ձեր այդ գումարք,
իմ չարութեա՛ն՝ չէք հաւասարք։
Ես արուսեակ՝ յերկնային կարգ,
ճաճամերձ՝ ունէի յարգ.
ինձէն եղէ՝ այսչափ անարգ,
և ձեզ հանուրց՝ չարեաց պատճառք։

Խիղճ մտաց։

Շնորհ ինչ ունիմ՝ ձե՛զ անշնորհք,
զի աշխատանս՝ ինձ ոչ թողուք.
վկայութիւն՝ ձեզէն ետուք,
ձեր յանցանաց՝ խղճի մտօք։

Հաստա եկայք՝ յատեան ոմ դուք,
և լինջ անդէն՝ իրաւունս տուք.
ես յոտին կամ՝ աստ շուրջ զձեօք,
ձեռն իմ ձգեալ՝ ըղձեր զօձեօք։

Երկինք։ Ե՛ երկիր։

Վ կայ և ես՝ իմ աստեղօք,
վ կայ երկիրս՝ իւր տարերօք.
գիտակցութեան՝ անսայ ոչ ոք,
կամաւ կորեան՝ այս ոք, այն ոք։

Երկինք երկիր՝ մերովք բարեօք,
ձեզ բարերարք՝ գտաք արդեօք.
այլ դուք ոմ՝ չարք՝ լցեալ չարեօք,
ձեզէն եղէք՝ ապաշնորհք։

Պահապան Հրեշտակք։

Վ կայեսցուք՝ և մեք անսուտ,
զի մեզաւորք՝ փայտ չոր են փուտ.
բան խրատու՝ մեր մօտալուտ,
յունկըն խլեց՝ ոչ ունէր մուտ։

Բայց զի՞ պիտին՝ խօսք օդայօդ,
ուր կայ վ կայ՝ ներքնածանօթ.
տէր սրտագէտ՝ ըստեղծուածոյդ,
զանձնիւրն առնէ՝ իւրև յամօթ։

Արդարք։

Յայս ժամ հին ուխտք մեր կատարին,
ուր հին և նոր՝ ուխտք վճարին.
մարգարէից՝ բանք 'ի ստուերին,
առաքելոց՝ յաւետագրին։

Յահէ աւուրս՝ դողայ երկին,
թող թէ երկիր՝ և երկրային.
այլ 'ի մեր կոյս՝ ելոյ Էին,

Եմք անկասկած՝ ամենևին։
Փառք, զի զերծաք՝ յալեաց ծովին,
Նաւահանգիստ մեր՝ երկնային •
ոչնչեց լրումն՝ էառ հոգին,
անապական՝ առեալ մարմին։
Կամք համարձակ՝ հանդէպ նոցին,
ոյք ըստ կամաց՝ մեզ իշխեցին •
դա՛ստ արասցէ՝ ոչ ընդ նոսին,
ինքն է բաժին՝ մերոյ մասին։

ՀԱՆԴԷՍ • Դ։

Առեան վերջին դատաստանի։

Միքայէլ։

Ինչիւն փողոյն՝ գաբրիէլի,
էր աւետիք՝ երկիւղալի •
քարեաց՝ բարբառ աւետալի,
չարաց՝ համբաւ չար՝ սոսկալի։
Գալուստ հովուին՝ երկնաւորի,
ընտրէ այսօր՝ զհօտ ոչխարի •
արդ զուարթունք՝ տաճիչք երկրի,
զատէք ըղձարս, ածէք զբարի։
Տէր թագաւոր՝ յաթոռ բազմի,
աստէն ընդ մէջ՝ երկնի ՝երկրի •
արդարք յաջմէ՝ դասին յերկնի,
չարք յահեկէ՝ յերեսս դեւոնի։

Գաբրիէլ։

Ահա՛ նշան՝ թագաւորի,

խաչ տէրունական՝ յօդս երևի.
ահա փառօք՝ դայ Հայրենի,
որդի մարդոյ՝ բանն 'ի մարմնի։
Աթոռ արկցի՝ առ արքայի,
ածամօր՝ մեր դշխոյի.
և առաքեալք՝ ընդ պետրոսի,
նստցին 'ի կարգ՝ ալթոռակցի։

Մէջայէլ։

Դուք զօրավարք՝ և զօրք երկնից,
շուրջ պատեցէք՝ զընտրեալ օդիս.
և դուք վոհմակք՝ դիւաձնդից,
լուրջ պահեցէք՝ ըղձեր այծիս։
Ահիւ սարսեալ՝ սիրտ բոլորից,
գումարեացի պատկառ յոդիս.
և լռութիւն՝ լեցի ձայնից,
զի լուիցի՝ պատգամ վեհիս։

Քաջ։

Լուր ինձ երկին՝ քոյին զարդուք,
վայելչազարդ՝ որբոց դասուք.
և ունկն դիր՝ երկիր յատուկ,
անշքացեալ՝ չարաց չարեօք։
Որդիս ծնայ՝ ես լի շնորհօք,
բարգաւաճեալ՝ յետոյ փառօք.
դասք անդրանկաց՝ հոգիք զուարթունք,
կրտսեր, մարդիկ՝ իմ ձեռատունկք։
Անարգեցին՝ զիս նախ բարձունք,
երիր մասամբ՝ օձատրտունք.
լեռնաթայն՝ կաթեալ լորձունք,
անշէջ հրոյ՝ կապեալ խրձունք։
Զարքն չարաւ՝ կորեան արդեօք,

բարի

բարի հրեշտակք՝ լցան բարեօք•
իսկ երկրածինք՝ իւրեանց կարեօք,
հրաւիրեցան՝ յերկինս վարուք։
Բայց վիշապին՝ դեղեալ թունօք,
օտարացան՝ յինէն մեղօք•
որոց ելի՝ ես յայց բազմօք,
մարգարէիւք՝ և օրինօք։
Մինչև անձամբ՝ եղէ մարդ ոք,
ահաբար՝ տանելով հոգ•
արդ ոչ ծանեան՝ զիմ յարդ յոքունք,
ես շատացայց՝ իմ ընտրելովք։

Ա-ՊՏԵԼՍ։

Արդար է բանդ՝ ով բանդ ահ,
յաղթող յատեան՝ դատաստանաց•
այդ այդպէս է՝ արքայ փառաց,
իրաւարար՝ հատարակաց։

ՄԻՍԱՅԷԼ։

Այլեցարուք՝ երկինք երկիր,
ընդ դատաստան՝ արդար կշիռ•
ահա ծանրեալ տեսէք զերկիր,
չարեօք իւրովք՝ անզուդակիր։
Կշռեալ աշխարհ՝ կշռով երկնից,
դտաւ պակաս՝ իբր յանբաւից•
պակասութիւն՝ որ բոլորից,
է հատարակ՝ մեղապարտից։
Ահ ընդդէմ՝ դիւաց գնդից,
զոյդ ընդ մարդկան՝ դիւազգեցից•
փոխան բարեաց՝ ապերախտից,
և շաղելոց՝ 'ի բիւր չարիս։

Քա:

Լոյնօրինակ՝ ըստ իրաւանց,
առնեմ զդատ՝ անձնիւր անձանց.
Թող քննեսցին՝ կէսք յօրինաց,
այլք 'ի համար՝ անօրինաց:
Դրեանք բացցին՝ մահու, կենաց,
ըստ անվրէպ՝ իմ դպրութեց.
վկայ աշխարհ՝ իմ հին մատեանս,
վկայ հոգւով՝ հայր յաւիտեանս:

Խնդ մաց:

Տէր դատաւոր՝ արդարութեան,
օրհնեալ ՝ ճշմարտութեան.
լուր և իմում՝ վկայութեան,
զոր դէտ եդեր՝ դիտակցութեան:
Եւ գոչէի՝ միշտ, զոր արժան,
մեղ մեղ՝ ներքին ունկան.
այլ անսաստեալ՝ ինձ ոչ լուան,
ընդ որ ասա զուր՝ ատրճանան:

Հրեշտակ:

Ադոնայի՝ տէր յաւիտեան,
տէր սաբաւոթ՝ ամենիշխան.
ոչ ապաքէն՝ հոգւոց մարդկան,
ըզմեզ եդիր՝ դու պահապան:
Ահա սոքա՝ որ յաջմէ կան,
եղեն լսողք՝ մեզ, հլու սան.
իսկ որ յահեակ՝ այծիք անկան,
գտան յոյժ խեռ՝ ապերասան:

Դանիէլ:

Եւ մեք ծնունդք՝ հօր ստութեան,
հարկիմք անսալ՝ ստուգութեան.

մեղէն լինիմք՝ մեք խոստովան,
ղի զչարօղք՝ էաք մարդկան։
Գուցէ ելցեն՝ 'ի մեր կայան,
վայրաբերել՝ էր մեր մեծ ջան.
տեսաք, հեշտեաւ՝ կամաւ լուսան,
մեր ստախաք՝ մոլորութեան։

Սէ։

Աղդարարդա՛ւ տէր, դա՛ւ արա,
մեր յոսոխացս՝ ընդ սատանայ.
սա՛ բանսարկու՝ թունիչ դժնեայ,
և դործակիցք՝ իւր, սա՛, դա՛, նա՛։
Լկիչք եղեն՝ մեր անխնայ,
այս անմարդիք՝ արք անուղղայ.
կենաց, ընչից, որ ինչ այլ կայ,
չար կեղեքիչք, որ՝ չափ ոչ կայ։

Քա։

Ո՛վ անողորմ՝ դև բռնաւոր,
և չարադև՝ դործակիցք իւր.
եօթնպատիկ՝ վրէժ անլուր,
առից 'ի ձէնջ՝ եա յայսմ աւուր։
Ո՞ հալածիչ՝ քարք ժանեւոր,
արեանարբու՝ անմեղ եղբօր.
հալածակա՛ն՝ լինջիր այսօր,
յիմոց դիմաց՝ երթ կորակոր։
Ո՛վ անիրաւ՝ դու յառեւտուր,
որ քաղեցեր՝ զոգի եղբօր.
ըստ իրաւանց՝ իմ ասեւոր,
հոգւով յետին լեր չքաւոր։
Դո՛ւ բամբասող՝ օձ թունաւոր,
չար խածատիչ՝ անուն՛ան եղբօր.

Ծաղածանակ լեր սատ բոլոր,
և յանիսեան 'ի վիհ անդ խոր։
Դու խաբեբայ՝ և կեղծաւոր,
որ արբուցեր՝ ըզջուր պղտոր.
արբջիր բաժակ՝ ցասման իմ նոր,
քամեա զնոյն՝ անանց մրուր։
Դու անամօթ՝ նախատինք հօր,
և լրբենի՝ անարդանք մօր.
դայթակղութիւն՝ եղուր հանուր,
երթ 'ի խոր դուռ՝ թաւալելոր։
Վ կայեցէք ինձ աստանօր,
ոն, առաքեալք՝ նատեալք յաթոռ.
որ իմ պատուէր՝ պահեցաւ, ուր,
յանարդ այծից՝ աստի յահուր։

Պետրոս։

Օ որ մարգարէք՝ քո կանխագոյն,
և զոր շրթունք՝ քո բերանոյն.
ընդ մեզ և ուխտ՝ եկեղեցւոյն,
քարոզեցաք, եղծին ըստոյն։

Պօղոս։

Թողին զիւրեանց՝ ըզկենսատուն,
օձին լուսն՝ եօթնագլխոյն.
արհամարհուք՝ եղծցին խակոյն,
յերկրերանեան՝ հատու սրոյն։

Յովհաննէս։

Ո՛չ պահեցին՝ ըզդանձ սիրոյն,
հնոյն աւանդ, կտակ նորոյն.
որով դատան՝ արժանաւոր,
ատելութեան, և ոչ սիրոյն։

Յակոբոս :

Հաւատք մեռեալ՝ առունկ անհաւատ,
պտուղ սիրոյ՝ չեմ փուտն արմատ.
յոյս անուտի՝ սաղարթապատ,
արդ թօթափի՝ ինքնանախատ :

Անդրէաս :

Համբերութիւն՝ վշտափարատ,
զայս դեղ կենաց՝ թոյն կարծէր վատ.
ոչ կամեցաւ՝ առնուլ իրատ,
պտուղ խաչի՝ ոչ կթեաց շատ :

Փիլիպպոս :

Կամաւ կուրաց՝ ընթացք գթեաց,
'ի լուսաւոր՝ ճանապարհաց.
զուր բողոքեն՝ յեռոյ զառաջ,
լոյսն ոչ ըղմեզ՝ լուսաւորեաց :

Թովմաս :

Իսկ պարադլուխ՝ այս յիմարաց,
հպարտք՝ հանդոյն սիրամարդաց.
չառին 'ի միտ՝ զոր տէրդ ասաց,
ցասումն իմ մեծ՝ լերանց բարձանց :

Մատթէոս :

Ծնունդք իժիոյ՝ եղբայրատեաց,
եղեն անձինք՝ նախանձոտաց.
արժանաւորք՝ կշտամբանաց,
ո՛վ չարակնեայ՝ տե՛ս զառաջ դանձ :

Բարթողիմէոս :

Եւ բարկութիւն՝ անօրինաց,
արդարութիւն՝ ինչ ոչ գործեաց.
միայն արդար՝ ըստ իրաւանց,
տէր բարկանաս՝ բարկացողաց :

Թադէոս։

Արդարացի՝ պատիւ ծուլաց,
որ չաշխատի, ուտէ ոչ հաց.
և անիծեալ՝ յայտնի դրած,
որ հեղգութիւն՝ զիմ գործ գործեաց։

Յակոբոս ալֆէայ։

Քանի՞ սատաք են՝ և ադահաց,
'ի հին և նոր՝ գիրս օրինաց.
անյապ դատերքն՝ այն տղրկաց,
Թող յաղեսցին՝ 'ի տանջանաց։

Շիմաւոն։

Որկորատեան՝ ծառայք անկած,
և գինեմոլ՝ գերիք բախած.
Թող սովեսցին՝ պատակեսցին,
արդարութեան՝ չունողք ըղքաղց։

Մատթէոս։

Անմաքրասէր՝ պղծախոհաց,
արժանահաս՝ է պատուհաս.
հուր դեհենոյ՝ կից ընդ որդանց,
զոյգ մշտատանջ՝ պատժոց դիւաց։

Քա։

Լուսոյք ով ջարք՝ ըղձարիս ձեր,
արդ խելահասք, ոչ տղայ՝ ծեր.
բանամ և ես՝ ըզմիտրս ձեր,
պայծառ տեսլեամբ՝ լոյս անստուեր։

Տեսէք անցնիւր՝ յանձինս ձեր,
զիւրոյ հոգւոյն՝ յստակ պատկեր.
տամ տեսանել՝ միոյ միոյ,
և զամ հոգւոց՝ վաւեր։

Արդարոյ։

Ո՛վ ահաւոր՝ կենդանադրի,
'ի հայելւոջս՝ յոր նկարի •
զիւրաքանչիւր՝ անձին դիմի,
վարս նշմարեմք՝ չար և բարի։
Բարիք բարեաց՝ ձիրք պանծալի,
չարիք չարաց՝ իրք պժգալի •
չարիք բարեաց՝ գրեալ ջրի,
բարիք չարաց՝ յոչինչ գրի •

Մ՝էղաւորոյ։

Առ ամօթոյն՝ մեր սոսկալի,
լա՛ւ էր սուզել՝ 'ի խորս վէմի •
ուր առ բեռանցս՝ անբառնալի,
ոչ ոք 'ի մէնջ՝ յայլ ոք հայի։
Թո՛ղ, վերակնել՝ անկարելի,
յերեսս ահեղ՝ դատաւորի •
որ և 'ի տես՝ սուրբք երամի,
հեղձամղձկիմք՝ նախանձելի։

Քն։

Այս դատաւոր՝ ներողամիտ,
եղէ այնչափ՝ երկայնամիտ •
այլ որ չէառ՝ զիմ աչր 'ի միտ,
ատելութիւն՝ գոյէ անմիտ։
Թէև մեղքն էր՝ ձանձախարիլթ,
ողորմութեամբ՝ մաքրիւր հոգիդ •
այլ անողորմք՝ եռուք առիլթ,
ձեզ անողորմ՝ լինել փրկչիդ։
Ողորմութիւն՝ ըստ իմ մատեան,
բարձր 'ի գլուխ՝ պարծի յատեան •
իմ էր պատգամ՝ յաւետարան,

տո՛ւք

տուք, և լինի՝ սուրբ՝ ամենայն:
Նովաւ իմ սուրբք՝ արդարացան,
քաւեալ զոր ինչ՝ այլուստ յանցեան.
ողորմելով՝ յիս զԹագաւոր,
և իմ զԹագոյս՝ հանդիպեցան:
Եւ արդ՝ եկայք, օրհնեալք իմ հօր,
ժառանգեցէք՝ զիմ փառս բոլոր.
ըզպատրաստեալն՝ 'ի սկզբանէ,
զարքայութիւնն՝ ձեզ երկնաւոր:
Զի քաղցելոյս՝ եռուք հաց ջուր,
մերկոյս հանդերձ, և վանատուր.
հիւանդ էի՝ տեսիք յաւուր,
և 'ի բանտի՝ եկէք 'ի լուր:

Արդարք:

Տէր բարերար՝ սուրբ Թագաւոր,
դու մեզ եղեր՝ երախտաւոր.
մեք զո՞ր տուաք՝ քեզ տրիտուր,
ե՞րբ արարաք քեզ՝ ինչ, կամ ուր:

Քրիստոս:

Ամէն ասեմ, հօտ բանաւոր,
զիտեմ զձեզ՝ վաստակաւոր.
զոր արարիք՝ այր ընդ եղբօր,
ինձ արարիք՝ զայդ իբրև հօր:
Իսկ դուք այժիք՝ ձախակողմեան,
մինչ խոտորնակք՝ տեառնակողման.
երԹայք յինէն՝ ուր անիծեալք,
'ի հուրն անշէջ՝ 'ի յաւիտեան:
Որ պատրաստեալն՝ է պատժարան,
սատանայի՝ և իւր կողման:
Զի քաղցելոյս՝ և հաց անգամ,

չեռուք, և ոչ՝ շինի զովացման։
Զողորմեցայք՝ իմ մերկութեան,
զօտարս թողիք՝ վտարական.
խօթացելոյս, բանտարկելոյս,
թիկնադարձոյցք՝ ապ'իբերան։

Մեղաւորք։

Տէր, երբ տեսաք՝ ըզքեզ կարօտ,
և պէտ առնել՝ չեկաք 'ի յոտդ.
մեք երբ տեսաք՝ զաներևոյթ,
և 'ի պաշտել՝ եղեաք անփոյթ։

Քր։

Ամէն ասեմ, ապատամբ հօտ,
յերկիր անցէք, բանն իմ անսուտ.
զոր չարարիք՝ այր ընդ եղբօրդ,
ինձ չարարիք՝ ով դուք անդուրթ։

Գաբրիէլ։

Ամենակալ՝ ամենատէր,
եղև, զոր ինչ՝ հրամայեցեր.
արդարք 'ի կեանս՝ ելին 'ի վեր,
և չարք ի՞ինն՝ 'ի մահ անմեռ։
Իսկ զի՞նչ արդեօք՝ տայցես պատուէր,
առ բանտարկեալս՝ 'ի մահատուէր.
զորս նախահօր՝ վերք կարեվէր,
առանց անձանց՝ մեղաց, պահէր։

Քր։

Վիճակ նոցա՝ արդարացի,
ըստ վիճակի՝ նոցա լեցի.
զի են անմեղ՝ յանհատ դատի,
պատիժ յինէն՝ ինչ ոչ տացի։
Այլ զի արդիւնք՝ իսկ պակասի,

և վարձ յինէն՝ ոչ եղեցի •
որով մնան՝ իբր 'ի բացի,
յաւէժաբար՝ 'ի լեմպոսի •

ՑԱՒԵԼՈՒԱԾ

Քեռիդողի առ վերծանօղս։

Ո՞ՒՆՉ ասասնօր՝ խորհուրդք յածին,
ընդ մեռս արդեօք՝ զգօն անձին •
ընդ որ արժան՝ թէ նախանձին,
իմ վերծանօղք, այս՝ այն դասին։
ԱՅԼ ոչ տեսաք՝ դեռ ըստ կարգին,
զոր ոք կրէ՝ ըստ իւր դատին •
եկայք մոցուք՝ կալ 'ի զննին,
ներքնոց՝ վերնոց, 'ի տես կրկին։
ՄԻ սօսափիր՝ ընդ մուտ վէրին,
յոր ըկ մտօք՝ իմ բանք տանին •
այլ սուռ խրատ՝ չմտանել,
դարձովք չաբեաց՝ յայն բանտ խորին։
Քեզ նախադրուն՝ վիճակ միջին,
առակաւոր՝ վէճ լեմպոսին •
այլ որ զհետ՝ դժոխք բանին,
արդեւամբք անկ են անառակին։

Գ Լ. Գ։

Դ Ժ Ո Խ Վ Ռ։

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ. Ա։

Առեղծուածք Ուրուականէ ընդ Լիմպոսի։

Ուրուական։

ՊուՀետէս՝ ո՞ Լիմբէ, շատ առեղծ,
մինչ զոչինչ՝ և ըզմեղս՝ մահուամբ եղծ.
այլ ես կամ՝ դժգրմնեալ՝ ցասմնայեղց,
զի զինէն՝ և ոչ մի՝ բան ստեղծ։
Ես անտես՝ արդ յարեայ՝ բանաստեղծ,
դանդատել՝ զիւր տխուր՝ դրուածէս.
զի եթէ՝ Ատենիւ՝ ահ արկ մեծ,
զի՞նչ ահեղ՝ ձայն արկցէ՝ զիմ Վրէհէս։

Լիմպոս։

Քաջ՝ի բաց, ո՞վ ցընորք, երթ, տխեղծ,
զի՝ի մեր՝ հանդրուան՝ չիք տեղ քեզ.
ասատանօր՝ եղելոցս՝ անհանդէս,
մի՝ի տես՝ դու անդամ՝ եկեացես։
Վրիպակաւ՝ ըզբանտիս՝ դուրս բախես,
զի դեհեան՝ զայս կայան՝ յերազես.
վիհք են խոր՝ խորագոյն՝ քան ըզմեզ,

միջակէտ՝ անդնդոց, զայն խնդրես:

Ռոբոճական:

Ես անտի արդ փախեայ՝ փուլթապէս,
մինչ դժոխք՝ փակէին՝ պնդապէս.
մի՛ արդեօք՝ զիս կալցին, յ՚շտապէս,
շնչասպառ՝ սրտատրոփ՝ եկի ձեզ:
Աղաչեմ, մի՛ մերժէք՝ ՚ի դրանէս,
զի չէ՛ ոք՝ հիւրընկալ՝ յաշխարհէս.
ո՛չ երկինք՝ ընդունին՝ պարզապէս,
ո՛չ երկիր՝ անքնակ. ա՛ստ դամ ես:

Լիմպոս:

՚Ի բանից՝ քոց այտի՝ յայտ առնես,
թ՚ ողջամիտ՝ նժդեհ ոք՝ բարի չես.
զի ես յօդ՝ ստայօդ՝ ինքնաստեղծ,
դու անդոյդ՝ յէից հօտ՝ ոչ մոցես:
Ե՛րթ առ քո՝ նանրախօս՝ սոփեստէաս,
հոմերոս, ովիդիոս, ովրատէաս.
զարտաքինս՝ մնոտեօք՝ հեշտ պատրես,
ընդարեալ՝ հոդեշահ՝ միտ չածես:

Ռոբոճական:

Վա՛յ աւա՜ղ՝ եղկելոյս՝ տիրապէս,
խայտառակ՝ և մանկանց՝ եղէ ես.
պատրուհակ՝ երազոցս՝ առ երեսս,
երաւամբք՝ ասա հարաւ՝ յիմ երեսս:
Ապաքէն՝ չեմ ինչ ես՝ խսկապէս,
այլ էակ՝ լոկ բանի՝ սոսկապէս.
Ռոբոճական՝ ճանաչիմ՝ ՚ի ձայնէս,
ռամկական՝ ձայն, Ի՚ բեայ՝ յայտնապէս:

Լիմպոս:

Եւ զի այդ՝ ստուգիւ՝ է այդպէս,

խաբեբայդ՝ 'ի կորուստ՝ երթիցես •
թէ ոչինչ՝ դու զքեզ՝ ճանաչես,
լեր անհետ՝ 'ի միջոց, ոչչ եմ ես։
Խորք 'ի ճահ՝ պատահեն՝ 'ի մահ քեզ,
օն անդրէն՝ 'ի դժոխս՝ թափ անցցես •
զի որոց՝ դործակից՝ չարեաց ես,
և նոցին՝ պատժակից՝ փայցես։

Ո-ւրուանան։

Լաւ է ինձ՝ կորնչել՝ ուրուանպէս,
քան երթալ՝ 'ի դեհեն՝ մշտակէզ •
թող ինքեանք՝ սուտ քերթողք՝ մեծամեծ,
խածատեն՝ անդ զիւրեանց՝ յարալեզ։
Ոյք յառակ՝ կեղծելով՝ զիս պէսպէս,
անառակ՝ արարին՝ զտիեզերս •
զի հրապոյր՝ դառնութեամբ՝ մերրապէս,
ջամբեցին՝ տղայոց՝ աղուանպէս։
Հեթանոսք՝ հին եղին՝ խորապէս,
առասպել՝ վիպասանք՝ մարմնազեղծ •
յոր անկան՝ որսացեալք՝ 'ի չարէս,
'ի թակարդ՝ զոր լարեաց՝ չար աղուէս։
Ելին գայլք՝ դառնազդեսաք՝ 'ի հօտէս,
խողխողել՝ զդառինս՝ լուապէս •
խրթնացան՝ սրբ մատեանք՝ յաշխարհէս,
ուր դրուածք՝ տիրեցին՝ դարշ պէսպէս։
Ո՞ւր թողից՝ ըզնկարս՝ աներես,
և զարձան՝ ըս ճարտար՝ անհանդերձ •
ուրուականք՝ խակ յայսդոյն՝ պատկերէս,
պժգանօք՝ դարձուցին՝ միշտ զերեսս։
Իսկ անմեղք՝ երբ յառին՝ պարզապէս,
ըմբռնին՝ 'ի թշնամեաց՝ 'ի նոյն տեսս •

այլ յեռոյ՝ ցաւեացին՝ մեծապէս,
տան անէծս՝ և առլթից՝ մերձապէս:

Լիմպոս:

Երթ գնա՛, ասացաք՝ մեք վաղ քեզ,
մի՛ հեղուր՝ յունկն մեր՝ զանլուր մեզ.
զի լաւ է՝ ոչ լսել՝ ըզխոհերս,
որ պղծեն՝ բծկանօք՝ և զանմեղս:
Լաւագոյն՝ է լսել՝ 'ի բաւղէս՝
դժոխոց՝ չարաղէտ՝ ձայն պէսպէս.
որ լինի՝ և խրատ՝ 'ի շաւղէս,
և մեզ ասա՝ 'ի սփոփանս, զի եմք զերծ:

Ուրուանական:

Զայն լսել՝ և անդամ՝ դողամ ես,
վերնք ինքնին՝ դղորդին՝ յարհաւրէս.
լաւ է ինձ՝ նանրանալ՝ մերձ ընդ մերձ,
և լինել՝ ոչ եղեալ, որպէս եմս:

ԵԴԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ. Բ.

Խուժան դիւաց:

Սատայէլ:

Գրդ մոլեալ՝ մոլեգնեալ՝ յուսահատ,
կամ փակեալ՝ յանել գուբ՝ բռնադատ.
իմ տանջանք՝ ինքնուրոյն՝ մշտաշատ,
են դժոխք՝ դժոխոց՝ միդապատ:
Ոչ ոք է, որ գիտէ՝ դէթ զարմատ,
իմ պատժոյս՝ գոգ անհուն՝ և անհատ.

զի

զի որչափ՝ եմ յԷդեն՝ տարանջատ,
ծայրայեղ՝ չէութիւնք՝ եմ աշխատ։

ԴԽՈՍ։

Մեք գիտեմք՝ ըղձոց ցաւ՝ ծով անբաւ,
չափելով՝ 'ի մերմէս՝ մեր քլաւ.
այլ արժան՝ է քեզ չար, և իրաւ,
հոյլք չարեաց՝ անսահման՝ պայմանաւ։
Զի այս վիհ՝ մեզ բացաւ, և լցաւ,
քո կամօք՝ և քոյին՝ պատճառաւ.
մեծ դաղան՝ ապստամբ՝ անիրաւ,
ցնկնեցար՝ ըզկորիւնս՝ միլիոնաւ։

ՍԱԳՈՅԷԼ։

Ոչ ունիմ՝ զղջանալ՝ ընդ իմ չար,
զոր ինձէն՝ ես ծնայ՝ չարաչար.
այլ հեղձնում՝ ընդ իմ կար՝ ապիկար,
զի ոչ քաջ՝ յաջողեաց՝ իմ հնար։
Ուր մարդիկ՝ յաղթեցին՝ ինձ տկար,
եղեն սքանչ՝ յանարբոց՝ անհամար.
արդ նոքա՝ յիմ վերինն՝ են կամար,
ես 'ի խորս՝ անդնդոց՝ ոտնահար։

ԴԽՈՍ։

Եւ որ շահ՝ էր, անշահ՝ կոյր մորոս,
յառաթելոյ՝ քեզ, կորուստ՝ այլ հոգւոց.
մաքառիլ՝ ընդ ՚ուծ՝ աստուծոց,
զայս հարկաւ՝ վերըս տայր՝ 'ի քո ծոց։
Այլ յիմարք՝ մեք դատաք՝ թուհահոծ,
որ կամօք՝ թիւրեցաք՝ 'ի քո խօսս.
կուրացոյց՝ և ըզմեզ՝ ախտ հոգւոց,
ինքնավէժ՝ անկանիլ՝ յանել փոս։

Գ.ԼՈՒԽ. Է։

Սարգիս։

Վայ և վայ՝ և բիւր վայ, տուք, առէք.
չար եղև, այլ եղև, կոծ առէք.
զանօգուտ՝ ապաշաւ՝ միշտ լացէք,
յաւիտեան՝ ոչ օգտիք, դիտացէք։
Կատաղեալ՝ քան զշունս՝ հաչեցէք,
խածատեալ՝ ըզմիմեանս՝ հաշեցէք.
զ'ի սրտի՝ դառնութեն՝ թափեցէք,
'ի մարդիկ՝ դատապարտ, տանջեցէք։

Դեռ։

Զի՞նչ օգուտ՝ դահճութեն՝ առ մարդիկ,
որ ինքնին՝ տոչորին՝ աւադիկ.
ո՞չ դիտես, տանջելով՝ և տանջիմք,
ուր դանեմք, 'ի վերուստ՝ և դանիմք։
Զի ո՛րչափ՝ յաւելան՝ նախ չարիք,
բարդեցան՝ և նոյնչափ՝ մեր կարիք.
և ո՛րքան՝ դանեսցուք՝ աստ այժմիկ,
առաւել՝ դան ըմպեմք՝ մեք սաստիկ։

Սարգիս։

Զե՛զ ասեմ, նը՛զոլեալք՝ և ջուառք,
զինչ լենիք՝ լենիջիք, ընդ իս՝ չարք.
այս է իմ, և ձեր դորձ, ո՛վ խաւարք,
չարչարել, չարչարիլ, կարդ անկարդ։
Ճանթանալ՝ և շանթել՝ ժանտ կրակ,
հրդեհել, հրդեհիլ, անապառք.
հայհոյել, ղօղանջել, միշտ անյադ,
մշտամարտ՝ ընդ Էին՝ հակառակ։

Դեռ։

Ո՛վ անդութ՝ անօրէն՝ մոլեգին,
ո՞ տոկայ՝ յայս վեճակ՝ ահագին.

դու

ԵՂԵՐԵՐԳՈՒ ԴԺԽՈՅ • Է :

դու ածեր՝ ըմեզ ասա՝ խմբովին ,
քեզ մնայ՝ և հանել՝ դլխովին :
Դիտ հնար՝ բանալոյ՝ զդուրս բանալն ,
որ փակնումք՝ 'ի ձեռաց՝ հզօրին •
եթէ ոչ , ասեմք քեզ՝ ըզյայտնին ,
արդ ըզքեզ՝ սատակեմք՝ կարճնովին :

Սաղայէլ :

Ա՛յ անմիտ՝ աքաղաղք՝ դոռոզն ,
փայտ կացցէ՝ 'ի վայր անդ՝ ուր անկցի •
որ անկաւ՝ ասա , կանգնիլ՝ ոչ ունի ,
որ եղև , այլ լինել՝ ոչ լինի :
Թէ ճար կայր՝ թաքստի , փախստի ,
ես նախկին՝ փախստեայ՝ վազէի •
և թէ դոյր՝ սատակման՝ իմ տեղի ,
ես անձամբ՝ զեւրովին՝ երթայի :

Դեւք :

Բամ գոնէ՝ խմբեսցուք՝ դունդք դիւաց ,
անիծիւք՝ արասցուք՝ քարկոծ զայս •
այ դու պիղծ՝ չարայեղց՝ բուն չարեաց ,
աղեջուր՝ ժանտաժուտ՝ ով չար այս :
Մինչ խաւար՝ և գօսի՝ այրեցան ,
'ի հնոցս՝ դժոխոց՝ այրիս ցած •
կոխեսցեն՝ ըզքեզ դևք՝ քո ծնած ,
ընդ մարդիկ , և ամեն՝ արարած :

Ե Դ Ե Բ Ե Բ Գ Ո Ի Թ Ի Ի՛Ն. Գ:

Աղէտք դատապարտ մարդկան:

Խառնաձայն աղաչանաց:

Դիւահաղնեալ՝ դատապարտ՝ 'ի բանդիս,
մեք ըղմեր՝ դուժեսցուք՝ սպանդիս.
ո՞ ո՞ւմ կայ՝ կարեկից՝ յայս ջարիս,
ուր անձնիւր՝ կայ բարձեալ՝ ղիւր բեռինս:
Խառնաձայն՝ հնչեսցուք՝ 'ի վշիս,
ահաբեկ՝ առնելով՝ ղդիւահաղդիս.
վա՜յ աւա՜ղ, խուժ և դուժ, սոսկալից,
ճիչ և կոծ՝ անողորմ, ողբալից:

Ոն:

Լռեցէք՝ անդգամք դուք քան զիս,
ես զեմ լոկ՝ ըղպատիժ պատմեցից.
հուր անշէջ՝ խարշատ՝ զեմ ոգիս,
լափլիզող՝ զարտաքինս՝ ընդ ներքինս:
'Ի գլխոյս՝ 'ի ներբանս՝ մինչ ոտից,
կամ թաղեալ՝ յայս հնոց՝ գեհենիս.
տապակիմ՝ յեռանդան՝ կատայիս,
պապակիմ՝ բերանով՝ և սրտիս:
Որդն անքուն՝ ինքնատանջ՝ չար խղճիս,
խածանէ՝ կրծանէ՝ զգոյս լերդիս.
ապաշաւ՝ անադան՝ ինձ լեղիս,
ցաւատէ՝ և մղձկէ՝ զեմ աղիս:
Արհաւիրք՝ խօլական՝ ցնորից,
ալեկոծ՝ ծփանօք՝ թոպէ զիս.

և տեսիլ՝ անժպիտ՝ չար դիմիս,
տէգընկէց՝ հարկանի՝ թշուառիս։
Կապանօք՝ և հրեղէն՝ շղթայից,
կաշկանդեալ՝ կարկամեալ՝ կայ մարմնոյ.
հարուածովք՝ անխնայ՝ միշտ դանից,
կոշկոռեալ՝ կոծոպի՝ և հոգիս։
Անձնամատ՝ յուսահատ՝ չար դերիս,
հայհոյեմ, բարբանջեմ՝ մնոտիս.
ահ ու վահ, ուր է մահ, չիք առ իս,
յաւիտեան՝ ես որպէս՝ ատա կեցից։

Այլ ոմն։

Ո՞ յիմար՝ դու խելառ՝ զի՞նչ խօսիս,
այդ քո անցք՝ են անանց՝ բոլորիցս.
աւելի՝ քան զմեզ՝ զի՞նչ ունիս,
ուր հանուր՝ 'ի նոյն կամք՝ 'ի պատժիս։
Այլ իմ հուր՝ է աղդու՝ սայրալից,
անպատում, ոչ ում ումեք՝ պատմեցից.
ընդ նմին՝ զուգակիր՝ իմա՛ ինձ,
տարտարոս՝ սառնապատ՝ սարսուալից։
Մութ խաւար՝ 'ի հուր ատ՝ տանջէ զիս,
միգամած՝ աղջամուղջ՝ գիշերիս.
քաղց ծարաւ՝ տոկամահ՝ լլկէ զիս,
խիլթ խելթկիչ՝ փեռեկէ՝ զիտրոտիս։
Դժնդակ՝ կիրք ոգւոյ՝ խեղդէ զիս,
հեղձամահ՝ սատակիմ՝ կենդանիս.
կրճտեմ՝ զատամունս՝ զայրալից,
այլ նովին՝ զայրանայ՝ իմ ցաւ յիս։

Անանուն։

Դուք իրաւ՝ խելագարք՝ ցնորիք,
զի ընդ այդ՝ ձեր վիճակ՝ տրտրիք.

Եթէ շատ՝ տանջանօք՝ չարչարիք,
Չարադոյն՝ են չարիս՝ չար չարիք։
Դուք չուառք՝ բաղում մեղս՝ արարիք,
Ես թշուառս՝ բաղմադոյն՝ վեցպատիկ.
Ըստ նմին՝ զիմ պատիժ՝ աւադիկ,
Վեցպատիկ՝ ծանրադոյն՝ ծանիջիք,

Զարանուն։

Ապա զիմ՝ ոչ անմիտք՝ դան սաստիկ,
Ըստ չափու՝ չարուն՝ իմացիք.
Զի իմ մեղք՝ հայելով՝ յայլ մարդիկ,
Էր հակայ՝ այլանդակ՝ առ կարճիկ։

Ծնող ըստ մարմնոյ։

Դուք զձեր՝ անձնական՝ անցս տուժիք,
Ինձ այլոց՝ և պարտեաց՝ կան պարտիք.
Չար զաւակ՝ պատուհաս՝ իմ որդիք,
Թող կրեն՝ զոր կրել՝ տան չարիք։

Ծնող ըստ հոգւոյ։

Հապա ես՝ հոդեպէս՝ բաղմորդի,
Որ ստացայ՝ ինձ պատիժ՝ վարձորդի.
'Ի քաւել՝ ըզյանցանս՝ յանցորդի,
Ես անկայ՝ յայս ուռկան՝ ցանցորդի։

Պէս մարմնոյ։

Զիս ապա՝ ոչ լայցէ՝ ողբալով,
Ըզդլուխ՝ բաղմուլթե՝ ծեծելով.
Զի իշխան՝ աշխարհի՝ իմ ելով,
Տամ համար՝ զանցնիւրոց՝ հեծելով։

Պէս հոգւոյ։

Առաւել՝ ես կոծիմ՝ ճչելով,
Չարաչար՝ իմ հօտիս՝ հովհեալով.
Չար տանջանք՝ երթալով երթալով,

վերացոյց՝ ըզտապանն՝ 'ի մեծ ծով:

Մեծապուն:

Մեծութիւն՝ աշխարհի՝ սովելով,
զայս դոլի՝ դանձ չարեաց՝ ընդ հողով.
զրդանօք՝ տղմասէր՝ կինձ դոլով,
յայս մոլի՝ լուսալիս՝ այրելով:

Աղտապ:

Անհամբեր՝ և տժգոհ՝ լինելով,
կորուսի՝ զերկնաւոր՝ դանձ յոլով.
'ի վարձուց՝ 'ի կենաց՝ զրկելով,
զնեցի՝ զայս զեհենն՝ լի հրով:

Դանոյ:

Լ՝հ, շատ է, արդ ասատէ՝ սադայէլ,
շունք հաչօղք, մի՝ այդչափ՝ կաղկանձել.
շատ է ձեզ՝ ընդ անձին՝ ոդորել,
զի՞ ճգնիք՝ մեծաձայն՝ պապաջել:

Մարդիկ:

Եւ զիարդ՝ չար դաղանք՝ բանտարդել,
սանձեացուք՝ ըզլեզուս՝ ամնարդել.
դուք դիւռէք՝ ոխերիմ՝ չարչարել,
դիտիցէք՝ զոր կրեմք, և կրել:

Դանոյ:

Վա՜շ և վա՜շ՝ խելայեղք, քան անխել,
ձեր տանջանք՝ առ մերոյս՝ է հանդչել.
ո՞ կարէ՝ մեզ պատժովք՝ նմանել,
բայց որ մեզ՝ չար դիւ՞աց՝ նման ել:
Թէ կամիք՝ զայդ 'ի փորձ՝ տեսանել,
մատերուք՝ խորագոյն՝ 'ի զնել.
ուր նատի՝ մեր զլուխ՝ սամայէլ,
բարեկամք՝ մերձ առ նա՝ առաւել:

ԵՂԵՐ-

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ Դ։

Զաղանք և ճաղկանք չարագլխոց։

Սաքայէլ։

Հէ, հսկայք՝ հսկայից՝ առաջնոց,
այրընտիր՝ բարձակիցք՝ իմ շքոյս.
արդ արքէք՝ ըզբաժակ՝ մեր պատժոյս,
ցարբենալ՝ յաւիտեան՝ խելայոյզ։
Որ կերայք՝ ըզմեղայ՝ ժանտաբոյս,
խոցոտիք՝ յիւր դժնեայ՝ ասա փշոց.
և նոյն փուշք՝ վառեսցեն՝ ձեզ ըզբոց,
առ անշէջ՝ բորբոքել՝ զիմ հնոց։
Տուք Բեելայ նեբրովթայ՝ դլխանոց,
արքունի՝ զիմ հրաշէկ՝ շանթահոս.
Ծերանի՝ բոցասփիւռ՝ 'ի մերկուց,
զաւտարան՝ խարազան՝ վայրիշոց։
Իւր արնամբ՝ իւրոյին՝ լցցի ծոց,
մեռացէ՝ 'ի մարմին՝ յոգի խոց.
Խշեսցէ՝ աստանօր՝ առնել որս,
սնապուռնդ՝ Հիւաղաց՝ չարագործ։
Յարայեկ՝ յառասպելս՝ կերբերոս,
Շամիրամ՝ եռգլխի՝ շունն այն բոզ.
Թող պահէ՝ զիմ ամթոռ՝ ընդ Կենոս,
'ի տիրել՝ հասորուոց՝ չար այսոց։
Սարդանբաղ, Նաբուդոդ, զայս երկուս,
ես լծեմ՝ յիմ անդի՝ 'ի մի լուծ.
Թող վարեն՝ և վառեն՝ զանշէջ բոց,

պաշ

պարարուն՝ այս արջառք՝ կեր արջոյս։
Կոչեցէք՝ ինձ յառաջ՝ ըղկիւրոս,
կապեցէք՝ ըղկապկիս՝ պարանոց•
ընդ շղթայ՝ հրեղինիկ՝ ոսկեզօծ,
'ի խաղալ՝ միշտ յահեակ՝ ծաղրելոյս։
Դող կալաւ՝ Աղեքսանդր՝ ըզքո յոյս,
որ արդեօք՝ ինձ պատիւք՝ են պատժոց•
Թող տանին՝ իմ պահակք՝ զոք բրոց,
և ձաղեն՝ ընդ փողոցս՝ անդնդոց։
Մի՛ իշխեր՝ ասա ելից, այլ 'ի մուտս,
տես զարձակ՝ ըղծաւալ՝ իմ տեղւոյս•
ուր հաճիս, անդ դիջեր՝ ըզդահոյս,
և հանդիր՝ անհանդիստ՝ յիմ ինջոյս։
Արտաշէսք, Արտաւազդք՝ պորտաբոյծ,
և որ այլ՝ յայլ աղգաց՝ արք դողող•
Ճոխութիք՝ պերճութիք՝ իմ դանձուց,
ձեզ լեցին՝ և լցին 'ի ծակ ծոց։
Զոր կամիք՝ չարադան՝ առ մորոս,
է պատրաստ՝ ձեր դլխոց, իմ դլխոյս•
և զի դուք՝ ցաւ եղէք՝ ասա դլխոյս,
ճմլեցից՝ ես ըզձեր՝ ուղղածուծ։
Բռնակալք՝ բռնաւորք՝ շատ դարուց,
կայսերաց՝ նշկահիչք՝ դուք լծոց•
օն եկայք՝ փորձեցէք՝ և զիմ ոյժս,
թէ կարէք՝ խլրտել՝ յայս, յայն՝ կոյս։
Ես 'ի ձէնջ՝ զիմ առից՝ ոխ քինուս,
նախանձողք՝ անօրէն՝ իմ դործոյս•
Ես եղէ՝ ապստամբ՝ յաստուծոյս,
հիմ յիմարք՝ հեռեալ՝ ձեզ, հեռոյս։

Դեռ:

Շատ է, քո՝ աջակցաց՝ այսչափ յարդ,
Արդ դարձիր՝ յոր 'ի ձախ՝ կան անարդ.
Կորիս, դադան՝ աբիրոն, աւագ արք,
ԵՒ յանէս՝ և յամրէս՝ մեծ որեարք:
Արիոս՝ ընդ սաբէլ՝ հակառակք,
մակեդոն՝ ինքնուրոյն՝ այլ բանակ.
ԵՒ նեստոր՝ եւտիքէս՝ խառամբակք,
ԵՒ որ այլ՝ դողանիշ՝ քո դրօշակք:

Սաղոյէլ:

Մատերուք՝ իմ ընտիր՝ համադամք,
զի զձեզ՝ ուտելոյ՝ սովեալ կամք.
Ես ձեզ շնորհ՝ շատ ունիմ՝ իրաւամբք,
զի լցիք՝ ըղսեղան՝ դարշուլթեամբք:
Այլ ցասումն՝ ունի զիս՝ այլ մասամբք,
զի զիմովս՝ զանցուցիք՝ չարուլթեամբք.
Ձեր իսկ կամք՝ այն էին՝ դերանուամբք,
ինձ յաղլթել՝ նորադիւս՝ իրաւամբք:
Ես թէպէտ՝ եմ յէրէն՝ ապատամբ,
այլ ունիմ՝ ըղհաւատս՝ ողջոյն տամբ.
Դուք զիարդ՝ իշխեցիք՝ պղտորմամբ,
այլայլել՝ զանյեղլին՝ բնուլթք:
Բարձրայօն՝ մրրկեալ՝ որոտմամբ,
պատառօղք՝ ըղհաւատս՝ որպէս զամպ.
Կէսք հերձիք՝ գահատէր՝ մոլուլթք,
Կէսք հեղձիք՝ ինքնահաճ՝ մոլորմամբ:
Արդ պատիւ՝ 'ի պատիժ՝ ձեզ արժան,
ընդ ոտիւք՝ իմ լինել՝ պատուանդան.
Ես դիոս՝ շանլթառաք՝ դև ոխտան,
կայծակամբ՝ ձեր իջից՝ դագաղթան:

Ճմլէ

Ճմլեցին՝ կոխ զողկոյզս՝ դառնութիւն,
ես զձեզ՝ 'ի հրեղէն՝ իմ հնձան։
զի լեցի՝ փքացումն՝ դիտութիւն,
պայթուցեալ՝ ցաւուցեալ՝ տիկ ունայն։

Դեռ։

Սպասեն՝ 'ի թիկանց՝ կարօտիւ,
և դէնպետք՝ մեծաղանդք՝ 'ի պատիւ։
մեր մանի՝ դամադիւտ՝ արուեստիւ,
ընտանի՝ մահու դիւտ՝ սուր սայրիւ։
Այս անուն՝ այսահար՝ մեր անիւ,
անանուն՝ վատանուն՝ ձեր բանիւ։
զի սոքա՝ որս ածին՝ ատտ կարթիւ,
զողջոյն խակ՝ և զաղինս՝ յոքնաթիւ։

Սաղայէլ։

Մեծարանս՝ արարէք՝ մեծ արանց,
դալ նստիլ՝ 'ի դահլիճ՝ մաղդեղանց։
դատեսցեն՝ դժնդակ՝ զիւր խուժանս,
դատեսցին՝ և ընդ իս՝ զիւր արժանս։
Ամրդ անկ է՝ ձեզ ո՛ արք՝ յիրաւանց,
աննման՝ պատուհաս՝ դերազանց։
խորհեցայ՝ ոչ դոն՝ ատտանայս,
դո՛ւք ինձ տուք՝ նոր խրատս, զոր կալայց։

Դեռ։

Քաջ ձաղեա՝ և ծաղրեա՝ ո՛վ չար այս,
զ'ի մարմնի՝ դիւազդեաց՝ անոպայս։
զոր այլոց՝ կաղմեցին՝ մեքենայս,
թո՛ղ նիւթեն՝ և անձանց՝ յանխնայս։

Սաղայէլ։

Ո՛չ այդպէս, երախտիք՝ երախտեաց,
փոխարէն՝ զիմ ըզփառս՝ արցա տաց։

սադայէլ՝ կոչեսցին՝ ըստ արանց,
արբանեակք՝ ձեւացին՝ ըստ դիւաց:
Թող բազմին՝ հեռանօղք սոցա՝ դաս,
ընտրօք՝ յերախանս՝ երախանս.
զոր առնեմք՝ մեք միշտ աստ՝ իրերաց,
արատցին՝ և նոքա՝ յաւիտեանս:

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ. Ե:

Կոծ յաւիտենական յուսահատութեան:

Հեղեանոս:

Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
յայս կոչեղ՝ զնա կապեաց՝ վերհ ասեան.
չարձակիմ՝ ես ապրեօք, յաւիտեան.
մեք արդեօք. կապեալ կաս՝ յաւիտեան:
Զի այս բանս՝ դիւտ պատժոց՝ քաւութեն,
և ոչ դեղ՝ իմ բուժիչ՝ չարութեն.
այլ անել՝ մշտապակ՝ խոր զընդան,
անանձարիւ՝ իմ յետին՝ խեռութեն:
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան.
ո՞ կարէ՝ և ժուժել՝ մի վայրկեան.
այլ չեք աստ՝ անցաւոր՝ այլ վայրկեան,
հարկ է նալ՝ անխոփոխ՝ յաւիտեան:
Ո՞յիմար՝ հիմ եկիր՝ յայս կայան.
թեկ մոեր, չելանես՝ յաւիտեան.
հաւատաս՝ դու այժմիկ՝ ըզդեհեան,
երբ անկար՝ փոքձ խեղտ՝ յիւր ուռկան:
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան՝

լսէի՝ յաշխարհի՝ զայդ քո ձայն.
այլ չաղդէր, դիտէի, իմ ունկան,
թէ զի՞նչ է՝ այս վիճակ՝ իսկական։
Կարծէի՝ դար երկար՝ բազմամեան,
որ դուցէ՝ երբ իցէ՝ կայ վախճան.
այլ այժմիկ՝ դիտացի՝ անվախճան,
յաւիտեան՝ զի՞նչ իցէ՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
ողբ առից՝ զիմ նախկին՝ կուրութեանս.
զի թողի՝ զարարիչն՝ յաւիտեան,
և եղէ՝ պաշտօնեայ՝ նանրութեանս։
Զիս ինձ թող՝ իմ հաստիչն՝ յաւիտեան,
ես ինձէն՝ եմ թշուառ՝ բիւրոստեան.
ո՞ւմ ցանուցմ, ո՞ւմ լինիմ ամբաստան,
ուր զիմ յոյս՝ ես հատի՝ յաւիտեան։

Հրէայ։

Յաւիտեա՛ն, յաւիտեա՛ն, յաւիտեա՛ն,
իմ բաժին՝ են դժոխք՝ յաւիտեան.
զի՞ եղև, զի եղէ՝ կոյր այնքան,
որ չառի՝ զայս 'ի միտ յաւիտեան։
Ո՞չ այսպէս՝ քարոզէր՝ իմ մատեան,
մեղաւորք՝ կորնչին՝ յաւիտեան.
'ի խնդրել՝ սուտ ըզսուտ՝ մեսիայն,
կորուսի՝ զճշմարիտն՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեա՛ն,
դու նոր մահ՝ անմահ ես՝ յաւիտեան.
օրինօք՝ մարդելոյս՝ մովսիսեան,
անօրէն՝ դաս ինձ տաս՝ դպրութեանս։
Ես զքեզ՝ դիտէի՝ անսահման,
բայց մտօք՝ դնէի՝ և սահման.

արդ ուսայ՝ ասա ըղքո՝ ՃԻՇՂ սահման,
միշտ Էլին՝ միշտ հաղորդ՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
զի՞նչ օգուտ, զի լայից յաւիտեան.
զի՞նչ օգուտ՝ ինձ յաղագէ ընտրութեանն,
երբ դատայ՝ ես անօթի՝ անպիտան։
Զի՞նչ օգուտ՝ ինձ հնարքը նենգութեանն,
ընտանի՝ իմ ազգիս՝ այն, բնութեանն.
ոչ պրծայց՝ 'ի ձեռաց՝ եհովայն,
զի կալաւ՝ զիս որ էնն՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
ոչ զերծայց՝ 'ի վայրէս՝ կորստեան.
դոչեցից՝ վայ ինձ վայ՝ յաւիտեան,
զի ոչ նախ՝ խորհեցայ՝ զյաւիտեանն։
Վայեցէք, ՃԻՇ բարձի, ընդունայն,
դառնացայց, զայրացայց, դեղ չէ այն.
զի սովիմբք՝ չար տանջանք՝ յաւելան,
նոյն և կան՝ և հնան յաւիտեան։

ՔՐԻՍՈՍՆԵԱՅ։

Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
ոչ երբեք, ոչ երբեք. չիք շրջան.
յանվախճանն՝ հաւատալ՝ էր ունայն,
երբ զոծոմք՝ ուրացայ՝ զայն վախճան։
Լոյս պայծառ՝ արդ տեսի՝ 'ի մթան,
ըղհաւատս՝ իմ փրկչին՝ մի միայն.
այլ խաւար՝ հաս որդւոյս՝ կորստեան,
զի զիմ լոյս՝ կորուսի՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
ասա տանջիմ՝ ես կնքովս՝ փրկութեանն.
ում դժոխք՝ նորանոր՝ էր արժան,

զի

զի գիտէր, զանգիտէր՝ ոչ, յինքեան։
Զի՞նչ շահ լինձ՝ եղև սուրբ՝ աւազան,
զի՞նչ և շնորհք՝ խորհրդոց, ուր հոսան.
ուր վարուք՝ կամաւոր՝ վատուլթիւն,
մատնեցայ՝ յայս կալանս՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
ո՛չ տեսից՝ զիմ զոհ՝ յաւիտեան.
զրկեալ եմ՝ յաղբերէն՝ էութիւն,
ընկղմեալ՝ 'ի վիհ խոր՝ չքուլթիւն։
Ո՛հ աղէտք՝ այս պատժոյս՝ զրկուլթիւն,
բիւր դժոխք՝ դժոխոց՝ սա միայն.
և ընդէր զրկեցար՝ ոչ անքան,
ողբասցե՛ս՝ ըզպատճառս՝ յաւիտեան։
Յաւիտեան, յաւիտեան, յաւիտեան,
է՛ս 'ի վիհս, իմ եղբարք՝ 'ի վեր կան.
է՛ս ըմպեմ՝ ասա լեղի՝ դառնուլթիւն,
իսկ նոքա՝ անդ յուղխից՝ փափկուլթիւն։
Ես տանջիմ՝ ասա սատան ընդ սատան,
իսկ նոքա՝ զուարթնոց՝ զոյդ խնդան.
որպիսի՝ ասա աղէտք՝ անվախճան,
որպիսի՝ անդ են փառք՝ յաւիտեան։

ԳԼ. Դ։

ԸՐԿԸՅՈՒԹԻՒՆ։

ՀԱՆԴԷՍ. Ա։

Էական փառք ածատեսութեան։

Աշ հայր։

Երկինք և երկիր՝ սկիզբն եղական,
եղեցի քանիւս՝ նոր և անվախճան.
խաւարն առաջին՝ խոր անդնդական,
հերքեաւ յերեսացս՝ յանդունդ յաւիտեան։
Եղեցի՛ անեղ՝ լոյս երրորդական,
ծագեալ եղելոցս՝ իմոց սիրական.
զարթիր լոյս փառաց՝ իմ առաւօտեան,
նոր օր աներեկ՝ և անվաղորդայն։
Զեն պէտք աստանօր՝ այլ արարչութե,
ոչ այլայլելի՝ էից յեղյեղման.
ոչ պէտք ճրագի՝ և արեգական,
ես իմ սիրելեաց՝ լոյս եմ գոյական։
Այս է իմ հանդիստ՝ յաւիտենական,
զի ես եմ հանդիստ՝ որոց ընդ իս կան.
վայելք անսահման՝ իմոյ մեծութե,
է իմ որդեկացս՝ գոյք ժառանգութե։

Օրհ-

Օրհնեալ իմ զաւակք՝ հօրըս միական,
օրհնեալ հարազատք՝ բանիս էական.
օրհնեալ դուք հարսունք՝ հոգւոյն սրբուն,
օրհնեցէք զնա՝ 'ի ձայն ցնծութեան :
Զուարթունք երկնից՝ դասք դասք անդրնկն,
դասակից եղբարք՝ կրտսերք, ազգ մրդկն.
մի հօտ մի հովիւ՝ եղէք բանական,
միջնորդաւ բանին՝ սուրբ տնօրէնութեան :

Որդեան այ :

Լուկայք իմ պարծանք՝ որդիք փրկութեան,
մատիք առ իմ հայր՝ առ հայր ձեր համայն.
և առէք ըղձոյս՝ պայծառ տեսութեան,
'ի հօրէն լուսոյ՝ բան իմաստութեան :
Աստ ճաշակեցէք, տեսէք, թէ որքան՝
անուշակ և քաղցր՝ է որ ձեր յինքեան.
նախ շնորհօք առիք՝ ճաշակ զթութեան,
արդ փառօք՝ նաստջիք 'ի ճաշ դիտութեան :
Այս է այն սեղան՝ սուրբ արքայութեան,
զոր ձեզ ուխտեցի՝ յիմ աւետարան.
այս բաժակ սիրոյ՝ անապակ լրման,
զոր ընդ ձեզ ըմպել՝ եդի ձեզ պայման :
Պատուիրանապահք՝ սիրոյն կատարման,
պատիւ կատարեալ՝ առէք յայս սեղան.
պարզերես 'ի տես՝ ձեր արդարութեան,
յաղեալջիք յերեսս՝ մեր միասնական :
Ահա սուրբ սրտից՝ ձիրք անդուդական,
տեսանել զնա՝ հոգեղէն ական.
սրբասէր մարմնոյ՝ հանդէս իւր բնութեան,
ես բան մարմնացեալ՝ միակ առարկայն :
Առ այս կարդեցաւ՝ գործ տնտեսութեան,

ընուլ զամ՝ ըղտենչ տեսութեան .
նշան կատարեալ՝ բարեկամութեան ,
'ի դէմ յանդիման՝ տեսանի տեսչեան :

Հոգին աբ :

Ա՛ս , որ դրդայի՝ անդ յարարչութեան ,
վերաշրջելով՝ ջուրցն բաղմութեան .
նոյն մայրօրինակ՝ 'ի սուրբ աւազան ,
ծընայ և 'ի ջրոյ՝ զորդիսդ ընտրութեան :
Հեղիկ աղաւնիս՝ թեւօք մաքրութեան ,
ձեզ հովանացայ՝ յանբիծ սնդեան .
դդուեմ ասասնօր՝ սիրով սրբութեան ,
զորդիս սիոնի՝ յանանց հարանարան :
Տեսիք զիմ պտուղ՝ ըրիկ հեծութեան ,
յանմռունչ յորդոր՝ բարեխօսութեան .
տեսիք զիմ պտուղս՝ քաղցր և անմման ,
համեղաճաշակ՝ յերկնից բարութեան :
Նոր նաւահանդիստ՝ խոր խաղաղութեան ,
անձառ խնդութեան՝ միշտ երանութեան .
քաղցրիկ հեղութեան՝ ընդ զոր կատարման ,
որ է սէր սիրոյ՝ 'ի սէր անբաժան :
Տեսիք զեռալոյս՝ ակն արեգական ,
ոչ ընդ հայելի՝ այլ դէմ յանդիման .
ծանեայք զանձղին՝ զիսկն անգնական ,
ոչ նա ծանեաւ՝ ըզձեզ յիսկութեան :
Տեսիք , զի լցաւ՝ աւետիս խոստման ,
տալ ձեզ շուք պատիւ՝ մեծ ուծանման .
'ի տես անտեսին՝ ոչ է յինքեան ,
ետու նախագրել , զոյք նմին նման :

Օրհնաբանութիւն սրբոյ :

Օրհնեսցուք ըզՄարիամ , զոչեմ Մարիամ ,

պաշ

պատադլուխ՝ մայր կոյս՝ 'ի հոյլս բաղմերամ.
օրհնեսցո՛ւք ըզնոր՝ միշտ փառաւորեալն,
ըզփառօք բարձրեալ՝ յինքեան յաւիտեան:
Երդեսցո՛ւք երդ նոր՝ յաւէժ յաղթական,
որ ամենայաղթ՝ կեանք յաւերժական.
տեսաք մեծաղօր՝ զաջ իւր փրկական,
տեսանեմք յաւէտ՝ ըզդէմս իւրական:
Գոչեմք հոգեղէնք՝ ընդ որդիս մարդկան,
աբ աբ աբ ես որ՝ ած զօրութեն.
լի են քո փառօք՝ երկինք ամենայն,
որ է նոր երկիր՝ կենդանեաց համայն:
Երկիրպագանեմք՝ զոհ միաբերան,
երեքսրբենիդ՝ սուրբ Երրորդութեն.
օրհնեալ յինքնութենդ՝ ինքնաբաւական,
քեզ, ըզքեզ օրհնել՝ եղեալք բաւական:
Վերատին կրկնեմք՝ ձայն անհատական,
'ի զովեան փառաց՝ վեհիդ յաւիտեան.
զի խորհուրդ խորին՝ քոյին բարձրութեն,
առաւել ցուցաւ՝ 'ի խոնարհութեն.
Կոչել յոչէից՝ զառէս բազմութեն,
և ըզմեզ ընտրել՝ քեզ հաղորդական.
անճառ խորհրդով՝ բանին մարմնութեն,
հոգւոց և մարմնոց՝ շուք տալ մեծութեն:

ՀԱՆԴԷՍ. Բ։

Զմայլումն զուարճութեան հոգւոց արքոց։

Մարդէկ։

Ո՛վ սքանչելի՝ վիճակ ընտրութեան,
կեալ միշտ յարքունիս՝ սուրբ արքայութեան.
ուր ինքնին ամ՝ մեր կէտ և վախճան,
է արքայութիւն՝ անկէտ անվախճան։
Սէր է, գիտէաք, ամ՝ իսկական,
բայց արդ գիտացաք՝ ըզսէր իսկութեան.
ո՛վ զմայլելի՝ այս զուարճութեան,
ընկղմիլ 'ի սէր՝ յաւիտենական։
Ա՛յս է այն անտես՝ և անլուր ունկան,
որ ոչն էր անկեալ՝ և 'ի սիրտ մարդկան.
զոր մեզ պատրաստեաց՝ հայր մեր սիրական,
ամ և թագաւոր՝ փրկիչ տիրական։
Ա՜խ իմ, սէր իմ, ծով ասպնջական,
գետոցէն ուղխից՝ արտիս փափաքման,
գրտի զինդրելիս՝ լիաբաւական,
կալայ, ոչ թողից՝ ըզքեզ յաւիտեան։

Հրեշտակք։

'Ի ծով անսահման՝ էին մեծութեան,
խորք խորոց կարդան՝ 'ի ձայն ցնծութեան.
յսկզբանց դարուց՝ ցայս օր անվախճան,
անհատանելւոյն՝ կամք 'ի պշնութեան։
Յանբաւ իւր գեղոյն՝ լցեալ յզմայլման,

ապ-

արքեալ եմք հոգւով՝ յինապառ վայելման •
անթարգմանելի, վայելքն է վկայն,
տեսէք, զոր տեսիք, նոյն է յաւիտեան։

Մարդէկ։

Բաքէ, դերահրաշ՝ սխրալի փայլման,
անեղ արեգիս՝ 'ի բուն իւր ական •
'ի լոյս անմատոյց՝ որ բնակեալ միայն,
զինարդ շողշողէ՝ երկնաւոր արքայն։
Բոյլք աստեղահոյլ՝ տրբոց բազմութեն,
լուսով երեսաց՝ նորին լուսանան •
ո՞ կարէ ճառել՝ զ'ի վեր քան զբան,
շատ է վայելել, ասեմք միաբան։

Հրեշտակ։

Ամենք ո՛վ մարդիկ՝ ըղձալի մեծութեն,
իւր անչափելի՝ մեծ վայելչութեն •
յառեցայք 'ի խորս՝ իւր իմաստութեն,
արբիք յաղբերէ՝ յատակ գիտութեն։
Ծանեայք ըղծածուկս՝ անտես թագնութեն,
յանբաւ խորութեն՝ ներքին խորհրդեան •
ստորոգեցիք, թէ է անսահման,
ստորոգելեօք՝ ոչ յաւիտեան։

Մարդէկ։

Տեսաք բովանդակ՝ ըստ մեր ըստ պայման,
զի անքաւանդակ է՝ էնն անպայման •
ո՛չ որպիսութեն, ո՛չ որքանութեն,
ունի ինչ նշմար՝ անչափն և անքան։
Էնն ամենազօր՝ ըստ կարողութեն,
միշտ դերամաքուր՝ 'ի ներգործութեն •
ստորոգելիք՝ մեր պակասեցան,
առ բուն իսկութեն՝ էին իւր բնութեն։

Հրեշ-

Հրեշտակ:

Ահա արդ եղէք՝ քաջ ուծաբան,
ոչ ուծարեալք՝ յուծդիտութիւն.
ուր զոր կարդայիք՝ երբեմն 'ի մատեան,
և ոչ շինիթ գրի՝ առ այս ովկիան:
Թող զի գիտնաւորք՝ ոգէաք զուդական,
անդիր վերծանօղք՝ են այս դպրութիւն.
երանի որոց՝ սիրով մարդեցան,
քաջուշիմ դպիրք՝ են արքայութիւն:

Մարդէկ:

Այդ իսկ է պատճառ՝ մերում ապշութիւն,
ընդ կարդ աստանօր՝ արքոց, աննման.
տեսանեմք զոմանս՝ անդէտ դպրատան,
պատուհեալ վերադաս՝ աստ դերաստիճան:
Այլ քաջ ճանաչեմք, և ծանեաք, ճրքան,
ուծսիրութիւնք՝ կէին յեռանդան.
եթէ էր և հնար՝ ցաւէաք համայն,
թէ հիմ մեք չեղաք՝ 'ի սէր դեր մարդկան:

Հրեշտակ:

Բայց է՛ սքանչելի՝ այս դործ հիացման,
զի չիք աստ նախանձ, ոչ սէր անձնական.
խրաքանչիւրոք՝ ուրախ է այնքան,
որչափ են ուրախ՝ այլ սքք ամենայն:
Կերպաս համանիւթ՝ զգեստ բազմութիւն,
համաչափ ձեւեալ՝ հաստակի ինքեան.
կոչունք արքունի՝ բարելեց սեղան,
ըստ ախորժակի՝ յադի ամենայն:

Մարդէկ:

Յանապօտ վայրի՝ բուն ճշմարտութիւն,
եղբարք երիցունք՝ ասացէք մեզ զայն.

ոչ

ոչ նախանձ ձեզ արկ՝ փառք մարդեղութեն,
զոր ոչ ձեզ արար, արար որ մարդկան:
Եւ կամ աստանօր՝ յայս կարդ դերբնական,
ոմանք առ 'ի մէնջ՝ գեր քան զձեզ կան.
չասեմ զդշխոյն՝ փառաց Հանրական,
Մկրտիչ. Յովսէփ. և այլք ընտրական:

Հրեշտակ:

Առակաւ նախանձ՝ մեզ վայելչական,
այլ դու աննախանձ՝ իմա զնակականն.
Թագաւոր ծպտի՝ խոնարհ կերպարան,
քան զիւր պաշտօնեայց՝ յիւր արքունարան:
Կարդէ զարտաքինս՝ 'ի գործ պաշտաման,
ներքնոց գերադոյն, ոչ փոխարքայն.
ոք ոչ նախանձի՝ ընդ կարդ տէրութեն,
զոր արժան զրէ՝ վերին ինքնիշխան:

ՀԱՆԴԷՍ. Գ:

Փառք մարմնոյն Քրիստի, հանդերձ Մարքն իւրով:

Ադամ:

Փառք քեզ յաւիտեան՝ տամ լիաբերան,
փառաց Թագաւոր՝ յերկնային խորան.
որ ինձ նախահօր՝ փառք ես յաւիտեան,
պանծալի զաւակ՝ ոճ պեռական:
Հոլովեցեն առեր՝ մարմին ադամեան,
ընդ քեզ յարուցեր՝ զանկեալս բաղմամեան.

արդ 'ի տես մարմնոյդ՝ փառաւորութեանդ,
խայտայ իմ հոգիս՝ յանբաւ զմայլման:

Աբրահամ:

Ո՞ւմ շնորհ կալցուք՝ զոդ, ո՛ հայր աղամ,
զի ծնաւ փրկիչ՝ մեզ զարքայս փարթամ.
չեմք ինչ շնորհապարտ՝ քո նախկին անկման,
քայց այն իսկ առեալ՝ զայս գանձ աննման:
Աղէ օրհնեցո՛ւք՝ զաջըն հայրական,
որ կանգնեաց զանկեալս՝ 'ի շուք բարձրութեան.
ուր և ինձ պարծանք՝ պատիւ մեծ տուն,
զի հայր կոչեցայ՝ պտղոյն օրհնութեան:

Մովսէս:

Այժմիկ իմացայ՝ ըզմիտս իմ տեսլեան,
'ի տենչալ երբեմն՝ էին տեսութեանդ.
տեսի անդ ընդ ծերպ՝ լոյս 'ի ցոլացման,
զոր յետոյս կոչեաց՝ որ ինքնին թարգման:
Ահա աստանօր՝ նախայաւիտեան,
և զառաջս անդամ՝ եցոյց իսկութեանդ.
առաջք են անշուշտ՝ փառք ոճութեանդ,
և յետոյք դիտակ՝ առեալ մարդկութեանդ:

Պօղոս:

Եւ ես տեսանօղդ՝ տեսի քեզ նման,
անճառ տեսութի՝ յիմաստ վերացման.
այլ այն անցաւոր՝ ճաշակ բերկրութեանդ,
պատքուն առաւել՝ բերէր յիմ բերան:
Արդ վայելեցո՛ւք լիով ըստ տենչման,
անյապ 'ի յաղուրդ՝ դիմաց ոերուն հան.
յակաճիռս լինելով՝ 'ի բանն հայրական,
ընդ դեղ ինքնութեանդ՝ և մերըս բնութեանդ:

Պէտք. յովհ. Ա. յակ:

Եւ մեք դլխովին՝ յայլակերպութեանէ,
տեսաք 'ի մարմնի՝ շողն ածութեանէ.
մինչ ընդարմանալ՝ մեզ 'ի թմբրութեանէ,
և կամիլ մնալ՝ միշտ 'ի տես ծաղման:
Զի՞նչ ապա դողցուք՝ յայս կէտ բարձրութեանէ,
բանին 'ի մարմնի՝ գերարփիական.
ո՞վ ընաշխարհիկ՝ տիպ գեղեցկութեանէ,
ո՞վ անպատմելի՝ գեղ վայելչութեանէ:

Մաղդաղենացի:

Սէր իմ խաչելեալ, յոյժ գեղեցկացան՝
դէմք քո գեղեցիկ՝ յետ քո յարութեանէ.
այլ ահա այժմիկ՝ վայելուչ այնքան,
յորմէ յաղենալ՝ չիք մեզ յաւիտեան:
Քանի՞ գեղաղէշ՝ ընտիր ծիածան,
արկար լուսեղէն՝ անկար պատմուճան.
քանի՞ գեղափայլ՝ և վէրք հնդեքեան,
պայծառ շողշողեն՝ ակունք պատուական.

Ավետ:

Ո՞րպէս աննման՝ փառք ածութեանէ,
թագ 'ի գլուխ փայլէ՝ մարդոյս բնութեանէ.
յակինթ և զմրուխտ՝ շողան գոհարեան,
փշեայ պսակի՝ տեղանիշք արեան:
Ընդ որ ճոխափայլ՝ և սիրտք մեր ճիսան,
ղի կաթիլք եղեաք՝ աբ արեանդ հեղման.
արքայ արդոյից՝ 'ի վկայութեանէ,
կեցցե՛ս մշտայաղթ՝ կեանքդ անմահութեանէ:

Քահանայ:

Մեր հանուրց գլուխ՝ քահանայութեանէ,
ո՛վ գառն աստ՝ հովիւ վերնական.

օծեալ օծելոց՝ մեռոն դաղաթան,
հեղեալ 'ի գլուխդ՝ իւղ ածութեան։
Արկեալ 'ի հանդէս՝ նափորտ մարդկութեան
մատեար, մատուցեր՝ ուխտ յաւերժական.
արդ հոյլք երիցանց՝ կամք 'ի հիացման,
ընդ քո վեհափառ՝ կարգիդ կատարման։

Աղաչանք։

Ո՛վ հայր աղքատաց՝ 'ի յորդիս մարդկան,
կամաւոր աղքատ՝ արքայդ մեծութեան.
ոչ պիսի փառաւք՝ փայլեա անպայման,
ճշմարիտ դու գանձ՝ երկնից բարութեան։
Մեզ պատակ փառաց՝ եղեր բարձրութեան,
մեզ նմանելով՝ 'ի յաղքատութեան.
քանի՞ մեծ պատիւ և փառք աննման,
նման քեզ առնել՝ 'ի քում ճոխութեան։

Անդեղ հանկանչ։

Պարծանք պարծանաց՝ և դասուս մանկան,
ածմանկացեալ՝ հին աւուրց տղայն.
քո արեամբ ծնեալք՝ 'ի ծոց աւազան,
քո արդեամբ հասաք՝ յայս չափ կատարման։
Ամանուկ դեղեցիկ՝ եղեր անպայման,
դեղով վայելուչ՝ 'ի տիս մեծութեան.
իսկ զի՞նչ ասասնօր՝ դեղ քո էական,
յաղթօղ տեսութեան՝ բիւրաչեայ ական։

Եռայ։

Ամա՛պա, ո՛վ որդեակք, տեսէ՛ք յանդիման,
և չքնաղ լուսին՝ մայր արեգական.
պատակ պարծանաց՝ դուստր իմ կուսաստան,
ածամայր՝ ցուպ իմ ծերութեան։
Մեծութիւն, բաղում՝ դատերք ստացան,

այլ

այլ Կոյս Մարիամ՝ ինձ զանձ մեծութիւն.
բաղմի ըստ աջմէ՝ մօտ յերկնից արքայն,
և նմին նման՝ փայլէ սա մի ժիայն։

Յովակիմ, ի անուա։

Ո՛վ զաւակ սիրուն՝ պատուղ օրհնութիւն,
օրհնեալդ 'ի կանայս՝ պատակ կաւսութիւն.
վայր, անվայրափակ լուսոյն՝ օթեարան,
փառք քո՝ մեզ են փառք՝ յերկնից Ճեմարան։
Նշոյլք 'ի յերկրի՝ մեզ երևեցան,
կուսակիցն փայլմանդ՝ համատեղութիւն.
այլ որ ատանօր՝ փառք հանդիսացան,
անՃառ են բանի՝ բանին մատրնարան։

Յովսէփ ՃԾահայր։

Ինձ անկ է դողել՝ զիմ պայծառ շուշան,
որ դիտեմ զքեզ յարդ՝ իսանայր իւր փեսայն.
ծաղիկ անթառամ՝ էր ինձ պատուհասկան,
արդ դրախտ եղև՝ երկնից փափկութիւն։
Սրովբէ հողեղէն՝ էր նախ վեցթևեան,
արդ ինքնեակ դասուց՝ դշխոյ ինքնիշխան.
շնորհօք շողշողէր՝ հոգւոյն եօթնարփեան,
արդ փառօք փայլէ՝ Յեսու նման։

Մկրտչին Յովհաննէս։

Քեզ երկրպագեմ՝ ըստ քում անդրանկան,
մայր աղաստարար՝ ծնող փրկութիւն.
որ յարովայնէ՝ 'ի քո որովայն,
զիմ ողջունեցի՝ զերկնաւոր արքայն։
Կամ միշտ 'ի պաշտել՝ զարևդ աննման,
յանանց առաւօտս՝ արուսեակ ծագման.
քեզ ըստ միածնիդ՝ զովեստ մշտաձայն,
ես ձայն բարբառոյ՝ խաչվառիս կարդամ։

Հրեշ-

Հրեշտակ։

Զի՞ քեզ Կարապետ՝ և յերկնից խորան,
ձայնապետ լինել՝ նախյորդորական.
մեզ անկ դեղդեղել՝ ձայն անհատական,
ըստ ածորդւոյն՝ և մօրն օրհնութեան։
Գիտեմք հոգեղէնք՝ ըղյարդ և զարծան,
դեր 'ի վեր մտաց՝ բանին մայրութեան.
'ի վայր քան զաՀ՝ այս մի աստիճան,
հանուրց առէից՝ է դերաստիճան։

Մարդէ։

Հապա օրհնաբանք՝ հոյլք անմարմնական,
ուսուցէք նոր երգս՝ մեզ որդւոց մարդկան.
զի միշտ օրհնեսցուք՝ բանիւ բարձրութեան,
փրկեալքս զփրկիչ՝ ըստ մօր փրկութեան։
Զի թէ ոչ լինէր՝ փրկիչ դերութեան,
ո՞ւր էր տեսանել՝ մեզ զայս փրկարան.
և թէ ոչ լինէք՝ մայր ողորմութեան,
ո՞ւր էր հասանել՝ յայս հանդիսարան։

ՀԱՆԴԷՍ. Դ։

Զերք մարմնոց սրբոց, և վարձք
ըստ վարուց։

Քա։

Արիջնորդաւ մարմնոյ՝ անմարմին բանիս,
իսկիմ սիրելեացս՝ ըղբանս ընտանիս.
Հոգի՛ է ածՀայր, Որդի, Հոգիս,
ծագ ներդործական՝ անծայր էակից։

Անեղն՝ եղականս ստեղծ և ոդիս,
զանանիւթ բանեղէնս՝ 'ի դասըս վերինս։
Ծայր կարողական՝ զստորին մարմինս,
մարդ կրկնակցորդ՝ եղև 'ի միջինս։
Սովին տեսուլթբ՝ կեանք բանաւորիս,
կրէր ըզկրկին՝ ծայրայեղ կարիս։
Հոգին փափաքէր՝ ձկտել 'ի վերինս,
կարօտ հասանել՝ իւր բուն կայանիս։
Իսկ յարկ հողեղէն՝ ծանրէր 'ի ստորինս,
մինչև եղծանել՝ ըզտխեղծ անձինս։
և թէ չէր հարթեալ՝ շնորհք ըզվերինս,
ոչ ոք ընդոտնէր՝ զանցըս դժուարինս։
Եւ զի մրցողաց՝ յասպարէզ մարտիս,
պատրաստեաց իմ հայր՝ վարձ ըստ արժանիս։
առաքեաց զբանն՝ 'ի նպաստ հօտիս,
լինել զօրադլուխ՝ մեծի հանդիսիս։
Արդ որդի մարդոյ՝ ես ասծորդիս,
մարմնով վանեցի՝ զիմ ձեր թշնամիս։
և նովին մարմնով՝ ելի 'ի յերկինս,
մտանել փառաւք՝ յիմ փառս հայրենիս։
Եւ հետևողացդ՝ իմ ճանապարհիս,
ինև յաջողեաց՝ յաջողուածս ելից։
Ձիրք ձեզ հոգեղէն՝ հեղան 'ի հոգիս,
էական ահա՝ փառք բենաւոեսից։
Ձիրք և մարմնեղէն՝ զեղան ծոցալից,
յանսպառ գանձուց՝ երկնից արքայիս։
որ հասարակաց՝ օժիտք բոլորից,
և որ ըստ անձանց՝ պարգևք են ձրից։

Արդարք։

Փառք քեզ թագաւոր՝ մեր յաւիտենից,

յոր շուք քև հասաք՝ ազգ հողեղինիս.
ընդ այնչափ վայելս՝ անոյշս 'ի հոգիս,
և մարմնով եղեաք՝ իբրև զանմարմինս։
Արեգակնացեալ՝ ըստ խոստման փրկչիս,
ողջոյն լուսաւորք՝ ծագեմք 'ի յերկինս.
դեղ պայծառութե՛ն՝ փայլման պատկերիս,
էր ընդ մեր անցեալ՝ ընդ միտս յաշխարհիս։
Ողջ անեղծական՝ անչարչարելիս,
միշտ անապական՝ անկիր 'ի կրից.
կեանք անախտութե՛ն՝ անցաւ և անբիծ,
դիւրութի՛ն ընութե՛ն՝ զեղուն ցնծալից։
Ո՛չ աշխատութե՛ն՝ կայ 'ի զբօսալիս,
և ո՛չ յափրութիւն՝ յանչափ անուշից.
միշտ կարողութե՛ք՝ զո՛ւարթ խայտալից,
և զգայութե՛ք՝ զմայլեալք յուղխից։
Թեթև նրբութի՛ն՝ զոյդ հոգւոյն ձրից,
և արագութի՛ն՝ քան զընթացս երկնից.
ո՛ւր և յօժարիմ, անդ է իմ տեղիս,
լրի՛ւ թափանցեալ՝ թափանցիկ մարմինս։
Զո՛ր վայր և խորհիմ՝ դտանեմ անդ զիս,
զի հրեշտակօրէն՝ հասանէ թռիչս։
այսչափ պարզութի՛ն՝ բաղյոդ բոլորիս,
զանփոփոխ լինել՝ յայտնէ վիճակիս։
Խնջոյք են խրախուն՝ 'ի նոր հարսանիս,
զո՛ւարթնոց պարուք՝ երգեհոն ձայնից.
զարդք շքեղաշուք՝ ՝աբ հարսնարանիս,
ակամբք յօրինեալ՝ 'ի հանքաց երկնից։
Փեսայն մեր անմահ՝ ակն 'ի մատանիս,
յանդուցեալ հանդէն՝ յիւր ակնակապիճս.
ՈՒԾ մարդացեալ՝ մեզ համաբնակից,

մարդ

մարդ ածացեալ, մեք իւր ընդակից։
Բանին բարձրելոյ՝ եղեալքս աղդակից,
գոհ ածացաք՝ ընդ. մեր մտրմնակից.
զարդու զարդարեալք՝ ըստ իւր հաճոյից,
հարսունք յառաջաստ՝ մտաք անմահից։
Պատակ բոլորեալ՝ առաք յանանիւթից,
պատճոյճ փողփողեալ՝ հանդէս հանդերձից.
'ի դահ բազմեցաք՝ արքունարանիս,
ուր արքայ բազմեալ՝ 'ի սիրտ բոլորից։

Հրեշտակք։

Այս մեք հոդեղէնք՝ ձեզ եմք խնդակից,
ուր տեսաք զձեզ՝ մեզ ուրախակից.
քանզի ձեօք լցաւ՝ պակաս մեր դասիս,
ապա մեօք լցցի՝ սպաս ձեր յաստիս։
Դուք մեզ 'ի պարծանս՝ էք յաւիտենից,
մեք ձեզ 'ի պարծանս՝ պաշտպանք մեր սանից.
տեսէք, որպիսի՝ հասիք աստ օժտից,
ունկնդիրք կանխաւ՝ մեր սիրուն բանից։
Օթևանք այս տան՝ հօր երկնաւորիս,
բազում են, տեսէք, յարձակ դաւառիս.
աշտիճանք փառաց՝ գերագահոյից,
ելևելս առնեն՝ քան զձեր կարծիս։
Մի մի էք աստեղք՝ հաստատունք յերկինս,
աստեղ քան զաստեղ՝ փայլմունք լուսալից.
ըստ պէսպէս ասեմ՝ ժիրաժիր ջանից,
մեծափայլ վառին՝ վառմունք ձեր ջահից։
Օրհնորդք դասերք՝ ահ լթագաւորիս,
փառք ձեր աստ ներքոյ՝ փայլեն սիրալից.
հանդերձք ոսկեհուռք՝ զարդք հոդեղինիս,
են պերճապատճոյճ՝ յօրինուածք սրտից։

Զեր ոսկեղինիկ՝ վարք յառաքինիս,
եղեն գեղափթիթ՝ վարդք զուարթալից։
Զեր արծաթափայլ՝ կարդ, շուշան ամբիծ,
հոտ անոյշ բուրէ՝ 'ի դրախտիս երկնից։
Հաւատք կենդանի՝ յուսով խնդալից,
եռ անմահ պտուղ՝ սէր յաւիտենից։
Բարեգործութիք՝ պէսպէս տաղանդից,
բարդաւաճ եղեն՝ շահուք անբաւից։
Այն աղքատութի՝ հոգւով 'ի մարմինս,
ոստ ժառանգ դոտաւ՝ գանձուց արքայիս։
Այն համբերութի՝ ըստ յոբայն կրից,
ըստացաւ փառօք՝ ձեզ ըզձեր ոգիս։
Ածխիրութիւն՝ ծառ կենաց՝ սրտից,
տեսէք, որքան է՝ յիւր կայս պտղալից։
Եղբայրսիրութի՝ ճիւղ անմահ տնկիս,
տեսէք, թէ որքան՝ բերս հասոյց բարիս։
Աղքատսիրութի՝ ողորմած, նայիս,
անբաւին զթոյն՝ արար արժանիս։
Եւ խոնարհութի՝ խոնարհ ծառայից,
տիրական դրկաց՝ արար գգուելիս։
Ներել թշնամեաց՝ զոյգ ընդ աղօթից,
բարեկամս զձեզ՝ կացոյց մեր վեհիս։
Փախչիլ 'ի փառաց՝ անշուք ստուերիս,
թագաւորս զձեզ՝ կացոյց փառացիս։
Խաչեալ աշխարհի՝ լինել յաշխարհիս,
խաչելոյն փառաց՝ արար տնկակից։
Յաղթել փորձանաց՝ 'ի փորձ հանդիսից,
ձեզ փառաց պսակ՝ հիւսեաց յանտեսից։

Քա։

Ընդ եկայք առ իս՝ յայս հանդէս երկնից,

զի ձեր վաստակոց՝ փոխան հատուցից.
ոչ ևս այլ ծառայս՝ ըզձեզ կոչեցից,
այլ՝ իմ բարեկամս, եղբարս, և որդիս:
Դուք ինձ մարդկօրէն՝ արարիք հարկիս,
ես ամծօրէն՝ ըզձեզ յարգեցից.
դուք որդիաբար՝ պաշտեցիք միշտ զիս,
ես ձեզ հայրաբար՝ դդուանըս ցուցից:
Դուք ինձ ողջակէզ՝ մատուցիք սրտից,
և ես ընկալայց՝ ըզձեզ յիմ հոգիս.
դուք զիս խնդրեցիք, և ոչ թէ զանձինս,
և ես ձեզ 'ի վարձ՝ զիս պարգևեցից:
Առատ եմ ձրիւք՝ ինքնաբուն բարիս,
և հաղորդական՝ ըստ անբաւ կարիս.
չարաց առ հարկի՝ չափեցի չարիս,
բարեաց ոչ չափով, անչափ տամ բարիս:
Ոյք մատամբ ծայրիւ՝ մերձեցան առ իս,
ես լիով գրկով՝ ընկալայ սրտիս.
և որ դուշնաքեայ՝ համբերին կրից,
ես անդուդական՝ եռու վարձ ձրից:
Թէ հատարակաց՝ է այս յարքունիս,
ինձ 'ի յաւիտեան՝ դոլ սեղանակից.
և ուրոյն ուրոյն՝ պատիւ բաշխեցից,
ըզփառս և ըզբարձ՝ պսակ և դաբնիս:
Աղէ Աստուած՝ աշակերտք բանիս,
որք հլու եղէք՝ ձեր վարդապետիս.
փոխան հնոտի՝ ուռկանացդ դոյից,
առէք 'ի գանձուցս՝ ղբստ ձեր հաճոյից:
Իսկ ընդ վաստակոց՝ յընթացս քարոզից,
հանդիստ անպատում՝ յաշտիճանս վերինս.
և վկայական՝ հանդէս ձեր երից,

պատակք փայլեսցեն՝ 'ի բարձունս երկնից։
Մարգարէ. դուշակք՝ հանդերձեալ բանիս,
և առաքինի՝ մշակք 'ի յայդիս.
առէք ըզձեր վարձ՝ ըստ նախ պայմանիս,
զողջոյն դահեկան՝ արքունի դիմիս։
Եւ ըստ դանաղան՝ քրտանց և ջանից,
աշտիճան պատուոյ՝ փառօք պանծալից.
և ըստ կատարման՝ բարուք ընթացից,
պսակ փառացի՝ և շուք խիլայից։
Վարդապետ. հովիւք՝ ընտրեալ իմ հօտիս,
նմանօղք արդեամբք՝ քաջ հովուապետիս.
ահա անթառամ՝ փառաց պսակիս,
արժանի եղէք՝ ըստ անսուտ տակիս։
Դաբնի և 'ի գլուխ՝ ձեզ մեծ բաբունից,
գրուագք գրուատեաց՝ 'ի մերձ հրաբունից.
դաւազան ոսկի, շքեղ մատանիս,
առէք յիմ աջոյս՝ իբրև աջակից։
Հայրապետ. անբիծք՝ իմոյ տաճարիս,
քարոզք հայրութեան՝ հօր երկնաւորիս.
նահապետք նախնիք՝ ընդ նոր օրինիս,
դաւազանք ծաղկեալք՝ նոր ահարոնիս։
Ըստ աստիճանի՝ ձերոց դահոյից,
եղան ձեզ ամթոռք՝ 'ի դահոյս երկնից.
խոյր ականակապ՝ յաննիւթ գոհարից,
ոսկր նափորտապատ՝ զգեստ բոլորից։
Մարգարէ. վկայք՝ միայն ճշմարտիս,
անվեհեր յատեան՝ ահեղ արքայից.
զօրականք յաղթօղք՝ 'ի պատերազմիս,
ընդդէմ բանասարկուին, մարմնոյ, ծիս։
Պարծանք ձեր դլխոյն՝ անդամք հոգելից,
պան-

պանծալի պսակ՝ ձեր գլխոյն եղից։
և մշտադալար՝ ոստս արմաւենիս,
առէք նշանակ՝ քաջք յառաքինիս։
Փոխանակ արեան՝ հեղման ձեր ընդ իս,
զբաժակ սիրոյ՝ իմոյ արբուցից։
փոխան պարանաց՝ ծիր յակինթ ածից,
ձեր պարանոցաց՝ զարդ յաւիտենից։
Փոխան գլխատման՝ լծադ յօրինեցիս,
և ընդ ծայրատման՝ ծայրագոյն պատիւս։
ընդ հուր և ընդ ջուր՝ անցեալոց բիւրից,
բիւրատպի վերաց՝ վարձքս բիւրազգիս։
Կոտանոջ ջահաղգեացք՝ մշտավառք յոգիս,
մաքրուլթք հաճոյք՝ յաչքս փեսայիս։
յառադաստ լուսոյ՝ ես ըզձեզ մուծից,
հարսունք սրբասունք՝ հետևօղք դառինս։
Պայծառ պատմուճան՝ ձեզ զգեցուցից,
յանդիման իմ հօր՝ ինձէն կացուցից։
հոգւոյն սրբուլթք՝ յաւէժ ընտանիս,
առնելով յիմ տան՝ յաւէտ անուանիս։
Ճգնաւորջ տքնօղք՝ ոչ զանմարմինս,
զոհարլթունք հոգւով՝ 'ի կիրս դժուարինս։
հոգւոյն ձեր հնազանդ՝ ցուցիք զմարմինս,
որդիք իմ հնազանդք՝ զոհեալք 'ի լերինս։
Երանաւսակ ըզլծադ՝ ես ձեզ կապեցիս,
վկայիս, կուսիս, և ըմբշամարտիս։
ոչ աշակերտք՝ նոյնպէս դասակիս,
մեծ կարապետին՝ իմոյ մկրտչիս։
Յաշխարհիս ծովու՝ բարիք ուռկանիս,
աղխարհածողով՝ զումարք ՝ի բիս խմբիս։
յարանց, 'ի հանանց՝ ընտրեալք իմ հօտիս,

Ծերք ընդ պղայոց՝ խաշինք արօտիս։
Եկայք աշխատեալք՝ ըզձեզ հանդուցից,
ոչ հանդուցիք՝ ըստ կարի դուք զիս •
ըստ իւրաքանչիւր՝ գործոց զարժանիս,
առէք ձեզ ըզվարձս՝ յերկնից արքունիս։
Անարատ վարուք՝ շահօղք քանքարիս,
առէք ձեզ կրկին՝ տոկոսեօք բարիս •
սիրով արարչին՝ վառեցայք յոգիս,
զիմ անշիջափառ՝ սէր 'ի ձեզ լուցից։
Մարմնով 'ի յերկրի՝ հոգւով 'ի յերկինս,
քաղաքավարեալք՝ ըստ իմ գնացից •
եղբայրավարեալ՝ արդ հրեշտակակից,
ճծավարեալ՝ գոյք յաւիտենից։

ՀԱՆԴԷՍ • Ե։

Խնջոյք խմբից հոգեղինաց ընդ
երանելեաց։

Հրեշտակ։

Ի սասապէտք երկնից՝ ձայն արկէք ինեակ,
ըստեղի աստ նոր՝ հնչեցէք նուագ •
'ի պատիւ մարդկան՝ առ մեզ վերելեակ,
'ի թիւ կատարեալ՝ ձայն լեցի տասնեակ։

Հրեշտակապետք։

'Ի դէպ ըզդաւթեան՝ տասնաղի տեսաք,
ոչ սաղմոսարան՝ նախաձայնեղակ •
օն արի օծեալ՝ դու յեսսեայ զաւակ,
հայր ըզքո քնարդ՝ ընդ մեզ համարձակ։

Դաւիթ։

Եւ կարի իսկ քաջ՝ ժամ է աջողակ,
պաշտելոյ զնոր՝ յերդ համահրեշտակ։
ուր ոչ է ատու�՝ ըստ հին օրինակ,
որ ճշմարտութեամբ, ոչ կոյս՝ տապանակ։
Այս օր աներեկ՝ և անամանակ,
զոր արար որ մեր, ցնծասցուք, եկայք։
ահա ցնծութեամբ՝ ձայն յարդարոց յարկ,
ծափս հարէք՝ արդարք, տնկախիտ ասա ծառք։
Զմի խնդրէի՝ պարգև անքանակ,
զտի 'ի բուն վայր՝ ասա ոճաբնակ։
'ի տաճար սքին՝ լինել միշտ բնակ,
և ըզվայելուչ՝ տեսանել ըզկարդ։
Մինչ հրամանատու՝ կարդիլ նախերդակ,
զի անդուլ ձայնիւ՝ տացին նմա փառք։
և արդ օրհնեցէք՝ գովեցէք անյաղ,
երդով քաղցրութեամբ՝ տոհմք ազանց աւաղ։

Հրեշտակ։

Զայնակից լերուք՝ հարք հոգենու

,
ոյք ըզշար ականց՝ յելուզեք ճարտարք։
երաժշտապետք՝ Մեսրոպ և Սահակ,
և Գերթողահայր՝ քերթողաց պարծանք։
Շարժեա՛ Շնորհալիդ՝ ըզշրթունս անփակ,
որ հոգեղինացս՝ ոգես զեղանակ։
նուագեա՛ Նարեկ՝ 'ի մարմնի հրեշտակ,
ընդ Ռոմանոսի՝ Գերմանոս երգակ։

Արդարք։

Ո՛վ սքանչելի՝ և ընտիր վիճակ,
երկնից տաճարի՝ յաւերժանուագ։
զոր զեղգեղ ձայնից՝ 'ի յերկրի լուաք,

գէթ

դէլթ ստուերաբար՝ սին նմանակ:
Ո՛չ արուեստական՝ գործի ասա հնչակ,
այլ աննիւթական՝ և հոգեստեակ.
անչափ զմայլմունք՝ խորագոյն համակ,
ծովաչափ ըղձից՝ լցուցիչ միակ:

Այլ:

Ակումբ խնջոյիցս այս հրաշագիտակ,
որչափ գեղեցիկ, տեսանէք եղբարք.
երկինք և երկիր՝ ասա միահաւաք,
գործեն ըղձրախնձան՝ մեզ անօրինակ:
Հանդէս սիրտիայլ՝ գերվայելչակարդ,
բաղմականք արդոյք՝ ողջոյն գերայարդ.
մեծ աւադանի՝ եմք առհասարակ,
երկնից արքայի՝ նաղելի զաւակք:

Այլ:

Սէր ընտանութեան՝ տեսէք ինձ ո՛ արք,
որպիսի փայլէ՝ 'ի մէջ մեր անքակ.
երբեմն անծանօթ՝ բաղմաղան այս աղդք,
եղեաք ասասանօր՝ ծանօթ ընտանեակ:
Հեռաւորք, համհարդ՝ հարազատ դասաք,
մերձաւորք՝ և և՛ս մերձագոյն մատեաք.
չէ՛ ոք ասա օտար, ողջոյն հարք եղբարք,
յօդիւ կատարման՝ ոգի քորք և մարք:

Այլ ոմն:

Նայեա՛ց աղաչեմ, ընդ ո՛ր և է կա՛մք,
նոյնչափ ընտանիք, որչափ մարդիկ կամք.
ո՛չ զոք հարցանեմ, ո՞ է այս աւադ,
ինքնին ճանաչեմ՝ իբրու գլխոյս թագ:
Սա՛ Ադամ, դիտեմ, սա՛ Եւայ՝ յատակ,
սոքա՛ Սէթ և Նոյ, և այլ նախահարք.

ահա

ահա՛ Առաքեալք՝ երեքտասանեակ,
ահա՛ Ստեփաննոս՝ պայծառ ոք պսակ։

Այլ։

Մկրտչին իմ կայր՝ առանձին փափաք,
տեսի և տեսայ, փա՛ռք ոչ՝ փառք.
ոք Լուսաւորչին՝ կարօտով լցաք,
յորդւոց և Թոռանց՝ տես վայելեցաք։
Մ՚եր է ամ արդարոց այս ազգ,
ո՛չ է ասա սեռի և սերի խտրանք.
մի սիրտ և մի անձն, նոյն և համհաստակ,
եմք արտէ 'ի սիրտ՝ արտակից դոյակ։

Այլ։

Սորին աղաղաւ՝ ազգք լեզուաբաժանք,
ազգ մի՝ մի լեզու՝ անդրէն ձուլեցաք.
զի ամենեքին՝ մի հոգի արբաք,
ամ լեզուաց՝ ներակիրթ եղեաք։
Յո՛ր կամիմք բարբառ՝ արշաւեմք արագ,
զո՛ր կամիմք լեզու՝ ստեղծումք պիտակ.
ուր ըզհրեշտակաց՝ և լեզու ուսաք,
մտօք և կամօք՝ քաղցրախօս խօսնակք։
Որով նախ հաստչին՝ տամք փառք վերնառաք,
հոգեղէն դասուց՝ կցորդ տաղերգակք.
ապա ընդ երեարս՝ խօսիմք միշտ խրախք,
զանցից անցելոց, զի ոք զերծաք։
Եւ և՛ս առաւել՝ զոր աստէն տեսաք,
զանանց ներկայիս՝ զանապառ վիճակ.
որ է անբաւին՝ վայելք անայլակ,
յանսահման ծովէն՝ ուղիք յորդալոտակ։

ՀԱՆԴԷՍ· Զ։

Վայելչութիւն երկնաւոր դրախտին,
և մեծութիւն երկնաքաղաքին։

Սէ հոյն։

Ադամ նախահայր՝ բնակեալդ 'ի յաղին,
զի՞ ասես 'ի տես՝ արդի՞ ՝նբ դրախտին.
զոր քեզ և որդւոցդ՝ իմ ՝նծորդին,
պարգևեաց փոխան՝ եդեմայ դաշտին։

Ադամ։

Բա՛բէ, տի՛րամայր՝ ՝նբ ՝նծածին,
բա՛բէ անճառիցս՝ անճառ միածնին.
դրախտն երկրաւոր՝ չէր ատուեր մեզ ին,
առ լուսով փառաց՝ այս ՝նբ դարաստին։
Անդ երևելի՝ ծառք կային կրկին,
կենաց, գիտութիւն՝ բարւոյ և չարին.
ասա՝ ՝նծ անեղ՝ կեանք մեր գլխովին,
գիտութիւն՝ ինքնին ամենաբարին։
Անդ պտուղք ծաղկունք՝ անմա՛ն էին,
բայց զգայութեամբ՝ արբանեկէին.
յաստանօր բարեաց՝ հոգի և մարմին,
դեր քան զզգալիս՝ անչափ զմայլին։
Անդ թռչունք և հաւք՝ և չորքոտանին,
դեղեցիկ տեսլեամբ՝ ախորժ անասային.
իսկ ասա վեցթևեանք՝ բաղմաչեայք վերհին,
անթարդման գեղով՝ զոշոտեն զոգին։
Զի՞ մի՛ մի թռչեմ՝ զաղցաւոր բարին,

անցաւորն էանց՝ ընդ յանցաւորին.
ասա զոր էս կարեմ՝ պատմել ըստ ճառին,
զանանց ճոխութիւն՝ ստոյգ անճառին.
Սուտ սողոմոնեան՝ պարծանք տաճարին,
չնչին մեծափառք, վաճառք պաճարին.
սա տուն ՝ այ՝ միայն պատճառին,
ամ բարեաց՝ բարեաց կաճառին:

Սէ հոյս:

Երի նախամայր՝ ընդ դստերս քոյին,
յածեաց յայս դրախտս՝ մեր հրաշալնին.
հոգւով խելամուտ՝ եղեր բոլորին,
անտրխեղծ մարմնով՝ զբօսիր և կրկին:

Եւայ:

Բաբէ կուսամայր՝ դշխոյ տիրածին,
այս ինձ մոռացոյց՝ ըզպարտէզն իմ հին.
փոխան վարսաւոր՝ տնկոց իմ դրախտին,
ահա լուսաւոր՝ տուն մեր տնկողին.
Փոխան խոխոջից՝ անդ ջրահոսանին,
աղբիւրք աստ ցայտեն՝ արփիականին:
Փոխան դայլայլից՝ ճռռողաձայնին,
զուարթնոց բարբառք՝ ախորժ յոյժ բերին:
Ընդ չքնաղութիւն՝ հաւուց երամին,
ուստերք և դստերք՝ զարդ են ինձ անդին.
զի գեղեցկութիւն՝ միոյն առանձին,
բիւրուց դեր 'ի վեր՝ զարդուց որ յադին:
Ընդ անուշութիւն՝ պտղոց տեսակին,
անբաւ քաղցրութիւն՝ կայ աստ 'ի հողին.
և դէմք քո քաղցրիկ՝ ընդ անոյշ ձայնին,
կեանք են անպատում՝ որ չկայր յադին:

Սէ հոյ։

Եւ դու Յովհաննէս՝ որոտման որդին,
որ նկարէիր՝ յերկրի անդ զերկին.
տես թէ նմանին՝ արդեօք ըստ իրին,
ըստուերագրութիւնդ՝ ընդ գաղափարին։

Յովհ. ա-էգ։

Եւ զինչ ասացից, միտք իմ շուարին,
զի այլ էր պատկեր, և այլ կենդանին.
Արծաթ և ոսկի՝ պատուական գրին,
ընդ ապգի ապգի՝ պատուական քարին։
Առ այս 'ի նոցունց՝ օրինակ տային,
բանք իմ յայտնութիւն՝ որոց միտք կային։
այլ ասա գերապանծ՝ են զարդք երկնային,
յոր լուսով փառաց՝ հոգւոյն աչք նային։
Եւ կարի իսկ քաջ՝ տեսիլ ներկային,
տայ ինձ ձեռնարկել՝ ըստ առարկային.
Թէ յերկրի եղեալ՝ տարերք չորեքկին,
յոլով բաղադրեալ՝ անդէն կացուցին.
Ասա անբաւ ելոյր՝ անտարրականին,
զիարդ ոչ անբաւ՝ հրաշալիք լինին.
կամ ըստ փառաւոյ՝ անհամար տառին,
չիցեն անհամար՝ քերթածք անբաւին։
Թէ ոտնատեղիք՝ ոսկւոյ նմանին,
պարիսպք և դրունք՝ գոհար մարգարտին.
իմ իմիք և յարկք՝ և ձեղունք վերին,
իմ իմիք և կահք՝ տան, հանդէս գրին։
Ուր արեգական՝ նման է մարմին,
զինչ նմանութիւն՝ գոցի առ հոգին.
որ նմանութիւն՝ կայ քո կիտուածին,
և զոր օրինակ՝ տացուք արքային։

Թող

Թող զմեծութիւն՝ երկնագաւառին,
զընդարձակութիւն՝ երկնաքաղաքին.
ո՞զչափ առնու՝ մեծի պալատին,
աստէն յարքունիս՝ մեր ինքնակալին։
Թող Դաւիթ անյաղթ՝ ընդ Աքու�՝ ինացին
հաշիւ արասցեն՝ ըստ նոր քանոնին.
չունի ասա տեղի՝ հին չափ մարդկային,
ձող ոսկի առցեն՝ չափ հրեշտակային։

Դաւիթ անյաղթ։

Օ՜ի՞նչ ասես՝ Թովմաս, ելցուք 'ի զընին,
անչափ մեծութե՜՝ աւետեաց երկրին.
բարձրութիւն ահեղ՝ խորութիւն խորին,
ընդ լայն և երկայն՝ մի չափ բոլորին։
Ի՜ քառակուսի՝ կիվոս քուէին,
'ի ձև կատարեալ՝ բոլորակ դնային.
հաւասարածիր՝ յանհաւասարին,
որում չէր հասու՝ միտք երկրաւորին։

Թովմաս ապուէնոյի։

Ո՞ իմաստասէր՝ 'ի վերին դասին,
յիրաւի հասաք՝ մեք մեծի մասին.
հասու և չափու՝ եղեաք հրեշտակին,
այլ անմարթ դրեալ՝ զայն 'ի պիտակին։
Ա՜ի՜բան դողցուք՝ 'ի լուր բոլորին,
եկայք և տեսէք, չեմք ձեռնհաս Ճառին.
զի այս դպրութիւն՝ երկնից մատենին,
ինքնադրոշմ 'ի մեզ՝ է՛ էին մատին։

Դաւիթ։

Գէթ մի օրինակ՝ տացուք քննողին,
տե՛ս, վերուստ 'ի վայր՝ զի՞նչ ինչ նշմարին.
ահա մեծութիւն՝ մեր հողագնտին,

մեզ

մեզ կէտ տեսանի՝ յաներևութին.
Աստեղք առ նովաւ՝ են մեծամարմին,
է որ հարիւրիցս՝ հազարիցս՝ առ մին.
զի՞նչ ապա իցէ՝ բովանդակ երկին,
ուր անթիւ՞ աստեղք՝ չեն և կէտ չնչին:

Մեծեալ Աբբայհայր:

Գնա՛ Հայր Անտոն՝ քո աշակերտին,
յանունդ դերյարդոյ՝ կոչեալ աբբային.
այս այն կէ՞տ իցէ՝ աշխարհ երկրային,
ուր պանդուխտք էաք՝ մեք եգիպտոսին:
Մեծ ինձ ինչ թո՞ւէր՝ ցամաք ընդ ծովին,
յելից խաղալով՝ մինչ 'ի մուտս նորին.
իսկ արդ հեշտ խաղամք՝ յանսահման ծովին,
առ որով երկիր՝ չէ՛ շիթ մի նորին:

Անդոն Աբբայ:

Բայց այն առաւել՝ էր զարմանալին,
զի մարդիկ յայն շիթ՝ ծարաւեալ կային.
'ի կաթէ կաթիլ՝ ըմպել կարծէին,
յանզովանալի՝ ծարաւ պասքէին:
Մանիկ 'ի մանէ՝ բաժին հանէին,
փոխան յագելոյ՝ յաւէտ քաղցնուին.
անմիտք 'ի նորին՝ պատճառս կորուսին,
զայս ծով բարուլթեց՝ զանսահման բարին:

Մեծն Պեմոն:

Դու ո՛վ հայր հարանց՝ եղեր առաջին,
հեղինակ զգօն՝ սքց երամին.
Ճանաչել զաշխարհս՝ ըստորին, վերին,
ըստ ճշմարտութեանն՝ տոպ և էին:
Զերկիր, 'ի թողուլ՝ անցաւոր հիւրին,
զերկինս, 'ի դնել՝ հայրենասիրին.

զոր 'ի վէպ առեալ՝ 'ի վարս անդ քոյին,
յիշատակ թողի՝ որոց միտս ունին։

Կոստանդիանոս հայր։

Տրդատէս եղբայր՝ յերաւի խօսին,
ոբ հարք իմաստունք՝ և յերկրի մասին.
զի առ 'ի ստանալ՝ զերկինս 'ի բաժին,
վաղագոյն յերկրի անդ զերկիր թողին։
Եւ դու անագան՝ հետևող նոցին,
թողեալ ըզքո թագ՝ ցանկացար լերին.
դոհանամ և ես, զի 'ի խորս արտին,
դանձ ոչ ունէի՝ զերկիր, այլ՝ զերկին։

Տրդատ արքայ։

Արդար ասացեր՝ հարազատ անդին,
աստ մեզ թագ կապեաց՝ լքուն անդ թագին.
զի՞նչ շահ արքայից՝ և շահնշահին,
որ ընդ անցաւորս՝ ինքեանք և անցին։
Զանբաժան երկրի՝ կէտ կտրատեցին,
կռուեալ ընդ մարմնոյ՝ զոգիս կորուսին.
եթէ արք էին, զերկինս կորզէին,
ըստ արիութեան՝ քաջ աւազակին։

Աղդէ հայրապետ։

Զայդ կանխաւ յերկրի՝ մեք քարոզք բանին,
ստէպ դոչէաք՝ յականջս խլին.
այլ ոչ յարգեցին, այլ անարգեցին,
զի կէսք ծաղրէին, այլք հալածեցին։

Աբգար Ռ։

Մեք ըզմեր քրտանց՝ առաք արժանին,
և նք զիւրեանց՝ պատուհաս յետին.
փառս մեք տացո՛ւք՝ ոչ կրկին,
փրկեալքս 'ի չարէն, փարեալքս ընդ բարին։

ՀԱՆԴԷՍ. Է։

Ուրախութիւն յաւիտենից 'ի վերջ
գլխոց սրբոց։

ԱԾ։

Յաւիտենական՝ յաւիտենական,
ես եմ ձեր ած՝ յաւիտենական.
Ես եմ, ոչ գոյ այլ, Որ Էն յաւիտեան,
անակիզըն յաւէժ՝ միշտ էն անվախճան։
Եւ ես ձեզ լինել, այլ ջունել վախճան,
զի ես եմ սկիզբն, նոյն և ձեր վախճան.
արդ ուրախ լերուք՝ ընդ իս յաւիտեան,
հասեալք յիս անկէտ՝ կէտ երանութեանն։

Հրեշտակ։

Յաւիտենական՝ յաւիտենական,
ած՝ մեր և կեանք յաւիտենական.
'ի քէն եղականքս՝ եղաք յսկզբան,
և 'ի քեզ անկաք՝ պահել ըզքո բան։
Մեծ շնորհօք հասաք՝ 'ի փառս վերնական,
ըզփառաւորեալդ՝ օրհնել յաւիտեան.
դոհանամք զքէն՝ Հայր ամենիշխան,
Բանիւ և Հոգւով՝ լոյս միասնական։
Յաւիտենական՝ յաւիտենական,
որ փառաց՝ մեր փառք յաւիտենական.
ցնծամք ընդ քո փառս՝ պարծանք ցնծուն,
որ ես անկորուստ՝ մեզ դանձ մեծութեանն։
Վայելք վայելուչ՝ է ածանման,

կեալ

կեալ եղականին՝ անեղծ յաւիտեան։
քոյ միայն վայել՝ մեծ վայելչութիւն,
հաղորդել բարին, և այն՝ անսահման։
Յաւիտենական՝ յաւիտենական,
վիճակ բերկրանաց՝ յաւիտենական։
ծով համատարած՝ անհուն ովկիան,
կեանք լիապատար՝ անանց յաւիտեան։
Զեղուն անսպառ՝ աղբեր բարութիւն,
լցուցիչ յաղուրդ՝ էիցքս բնութիւն։
զոչեմք հոգեղէնք՝ ձայն անհատական,
փառք քեզ թագաւոր՝ յաւիտենական։

Արդարք։

Յաւիտենական՝ յաւիտենական,
բաբէ, զի՞նչ են կեանք՝ յաւիտենական։
կեալ ոբ 'ի որ՝ 'ի փառս տիրական,
եղեալքս անեղին՝ միշտ հաղորդական։
Գոսաք անկորուստ՝ դանձ փարթամութիւն,
օն վայելեսցո՛ւք՝ մարդիկ յաւիտեան։
աներկիւղ յաւէժ՝ յապահովութիւն,
զի եմք փրկութիւն՝ որդիք յաւիտեան։
Յաւիտենական՝ յաւիտենական,
զի՞նչ իցէ ասել՝ յաւիտենական։
լսեաք յերկրի՝ զայս ձայն փրկական,
այլ ոչ ժամանէր՝ տեսութիւն ական։
Փառքք բարձրելոյն, զի եղեաք ժամանակ,
վայելել 'ի նոյն՝ քան անասուն խոսման։
մշտնջենաւոր՝ և յաւերժական,
փառք անբաւելոյն՝ վայելէ միայն։
Յաւիտենական՝ յաւիտենական,
ամ արքայութիւն՝ յաւիտենական,

յանբաւ վայելից քոց շինթ մի միայն,
ծով է անսահման, զի է յաւիտեան։
Ո՞ր սպա անուն՝ քեզ անբաւութիւն,
ամ բարեօք՝ լցեալ յաւիտեան.
դու ես որ ամ՝ յաւիտենական,
մեր արքայութիւն՝ յաւիտենական։
Յաւիտենական՝ յաւիտենական,
թագաւորութիւն՝ յաւիտենական.
զիարդ ըզքո յարդ՝ յոլովք ոչ ծանեան,
բազումք կոչեցան, սակաւք ընտրեցան։
Թէ տիպ տպանայր՝ քո 'ի սիրտ մարդկան,
ժառանգ լինէին՝ քո ամենեքեան.
այլ զի նանրացան՝ 'ի մտածութիւն,
վայրկենականօք՝ և 'ի վայր անկան։
Յաւիտենական՝ յաւիտենական,
վիճակ անպատում՝ միշտ անեղծութիւն.
ուստի՞ ի՞նչ ի՞ւիք՝ մեք էաք արժան,
վերանալ 'ի քո՝ վերին աշտիճան։
Այլ որ ըզխոնարհս՝ բարձր առնէ միայն,
աջով իւր ձգեաց՝ վերացոյց համայն.
նմա յաւէժ փառք՝ յիւրում բարձրութիւն,
վայելէ փառօք՝ միշտ և յաւիտեան։
Յաւիտենական՝ յաւիտենական,
ով երանութիւն՝ յաւիտենական.
երանեալ եմք մեք՝ ելբարք յաւիտեան,
զի եմք յանփոփոխ՝ կեանս երանական։
Երանաւէտեալք՝ յայսմ երանութիւն,
երանի՛ ասացուք՝ անձանց յաւիտեան.
զի անցեալ ընդ կարգ՝ ուրթ երանութիւն,
հասաք 'ի վերջին՝ կէտ երանութիւն։

Յաւիտենական՝ յաւիտենական,
փառք քեզ արարիչ՝ ամ յաւիտեան։
փառք քեզ Թագր՝ յաւիտենական,
փառք քեզ բարերար՝ օրհնեալ յաւիտեան։
Դու միայն պատճառ՝ մեր երանութեան,
միայն երանեալ՝ ինքնին յԷութեան։
փոխանակ լեզուաց՝ հոգիք մեր կարդան,
ընդ հոգեղինացս՝ քեզ փառս յաւիտեան։

Ամէն։

ՎԱԽՃԱՆ ԱՆՎԱԽՃԱՆ։

ՊԱՂԱՏԱՆՔ

'Ի խորոց սրտից։

Ամրդ որ դրեաց, և որ կարդաց՝ զայս ընթերցուած՝ քառից վերջնոց,
'ի մի բերան՝ կարդամք առ քեզ՝ որ ՝ի բարձ՝ հարցըն մերոց։
Մի ընդունայն՝ լեցին վաստակք՝ մերոյս փուրթոյ՝ քեզ 'ի հաճոյս.
Մի և մի զուր՝ լեցին անչափ ջանք Միածնիդ առ մեր հոգւոյս։
Զի առ 'ի մի՞ էր մարդանալ՝ անեղ Բանիդ, արա՛ մեզ յուշ,
Թէ չէր վախճան՝ մեծ, կարևոր, որ նկարել յընթացս գործոյս.
Մահու յաղթել, կեանս պարգևել՝ յաւիտենից՝ ննջեցելոց,
դատել զաշխարհս՝ արդարութիւնք, հատուցանել՝ վարձս ըստ գործոց։
Եւ արդ զիարդ՝ մեք հիդացեալք՝ թմբրիմք 'ի քուն մահու հոգւոց,
որ և տանի՝ յերկրորդ 'ի մահ, բաժին լինել չար դժոխոց.

և

և ոչ հակեմք՝ գործովք բարեաց արդիւնաւ
նալ՝ ըստ հաւատոց,
ժառանգ լինել՝ երանաւէտ՝ արքայութեան՝
ըստ խոստմանց քոց։
Լուր աղաչեմք, տուր պաղատիմք, Հայր մարդ
դասէր, մեզ 'ի ժամուս.
Ձիրքս շնորհաց՝ մեզ ըզՀոգւոյդ՝ միշտ անդ
ըսպառ անհատատհոս։
Տպաւորեա 'ի հոգիս մեր՝ սէր և անձուկ յարդ
կաց վերնոց.
դալ մտանել՝ 'ի հայրենիս մեր երկնային՝ 'ի
դասս արքոց։
Տուր նորոգիլ՝ մեզ 'ինոր մարդ, Յաղագեաց՝
փոխան հնոյս,
աստէն վարուք, անդէն փառաւք՝ պայծառաց
ցեալ ջահ մշտալոյս։
Մի կապեացուք, (օգնեա՛ մեզ ո՛ր,) ընդ անդ
ցաւոր կեանս յեզիպտոս,
խաւարասէր՝ մեր խորհրդով՝ ըստ աղցաւոր
հաճոյս մարմնոյս։
Մի մեզ թողուր՝ դերի լինել՝ այս աշխարհի՝
ընչին խնդրոց,
կորստական՝ ժամալաճառ՝ իրաց ըզհետ՝ զաչ
կատելոց։
Փրկեա՛ ըզմեզ 'ի փորձանաց՝ չարանախանձ՝
այսոց պղծոց,
արա՛ և զելս 'ի փորձութեանէ՝ համբերութիւն՝
պատակ գործոց։
Տուր վերակնել՝ միշտ 'ի բարձունս, ուր է
վախճան՝ մերոյ ուղւոյս.

Ձգեա՛ ըզսիրտ՝ մեր, տէր առ քեզ, սիրով վա-
ռեալ քո ընդաբոյս։
Արժանացո՛ ըզփափաքօղս՝ քում տեսութիւն,
զեր խորհրդոց,
'ի վայելել՝ 'ի պատրաստեալ՝ քո օթեւանս՝ ըն-
սրբոց քոց։
Փառաւորել՝ զերեքսրբեանն՝ մի ՝ուրութիւնդ,
սակն եռալոյս։
Զհայր և զՈրդիդ՝ և սբ զՀոգիդ, սբ սբ սբ,
Տէր, սեր մեր և յոյս։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/IX 1922